



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 06 » հոկտեմբերի 2025թ.

N 162-Վ

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱՄ ՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման N2 հավելվածի 20-րդ կետը և ղեկավարվելով
Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N748-Լ
որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ
իրականացնող կամ նման գործառույթ իրականացնելու ցանկություն ունեցող անձանց
գիտելիքների ստուգման հարցաշարը՝ համաձայն հավելվածի:

10/6/2025

X

ԵՐԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտեի
նախագահի 2025 թվականի
հոկտեմբերի 6-ի
N162-Ա հրամանի

ՀԱՐՑԱՇԱՐ

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱՄ ՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ

«ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 1.

Ո՞րն է համարվում բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածք

1. Շենքում կամ շինությունում ֆիզիկական և իրավաբանական անձանց բնակության համար չնախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածք (շինություն)

2. Շենքում կամ շինությունում ֆիզիկական անձանց բնակության համար չնախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածք (շինություն)

3. Շենքում ֆիզիկական անձանց բնակության համար չնախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածք (շինություն)

4. Շենքում կամ շինությունում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում գրանցված կամ համարակալված տարածք (շինություն)

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 2) - 2

Հարց 2

Ո՞վ է համարվում բազմաբնակարան շենքի շինության սեփականատեր

1. Բազմաբնակարան շենքում ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձը

2. Այն անձը, ում միջոցների հաշվին կառուցվել է բազմաբնակարան շենքում տվյալ շինությունը

3. Այն անձը, ով ունի բազմաբնակարան շենքի զբաղեցրած հողամասի նկատմամբ սեփականության իրավունք

4. Բազմաբնակարան շենքում շինության (բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի) նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 2) – 4

Հարց 3

Բազմաբնակարան շենքի շինության ամբողջ ներքին տարածքը համարվում է շինության սեփականատիրոջ սեփականություն

1. Այո
2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 2) – 1

Հարց 4

Ո՞րն է համարվում բազմաբնակարան շենքի շինության և ընդհանուր սեփականության սահման

1. Շինության միջհարկային ծածկերի և կրող կառուցվածքների ներքին մակերեսները
2. Շինության կրող կառուցվածքների ներքին մակերեսները՝ հարդարման նյութերի հաստության ներառմամբ

3. Շինության միջհարկային ծածկերի (առաստաղների, հատակների) և կրող կառուցվածքների ներքին մակերեսները՝ հարդարման նյութերի հաստության ներառմամբ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 2)- 3

Հարց 5

Ի՞նչ գործունեություն է բազմաբնակարան շենքի կառավարումը

1. Ընդհանուր բաժնային սեփականության սեփականատերերի՝ օրենքով, ինչպես նաև պայմանագրերով նախատեսված իրավունքների, պարտականությունների և պարտավորությունների իրագործմանն ուղղված գործունեություն

2. Ընդհանուր բաժնային սեփականության սեփականատերերի՝ օրենքով և իրավական այլ ակտերով, ինչպես նաև պայմանագրերով նախատեսված իրավունքների, պարտականությունների և պարտավորությունների իրագործմանն ուղղված գործունեություն

3. Ընդհանուր բաժնային սեփականության սեփականատերերի՝ իրավական ակտերով, նախատեսված իրավունքների և պարտավորությունների իրագործմանն ուղղված գործունեություն

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 2)- 2

Հարց 6

Ինչպես է որոշվում բազմաբնակարան շենքի բաժնային սեփականության մեջ սեփականատիրոջ բաժինը՝

1. **Սեփականատիրոջը սեփականության իրավունքով պատկանող բոլոր շինությունների տարածքների մակերեսի հարաբերությամբ այդ շենքի բոլոր**

շինությունների տարածքների ընդհանուր մակերեսների գումարին՝ արտահայտված տոկոսով

2. Սեփականատիրոջը պատկանող շինության մակերեսի հարաբերությամբ այդ շենքի ընդհանուր մակերեսների գումարին

3. Սեփականատիրոջը սեփականության իրավունքով պատկանող շինությունների մակերեսի հարաբերությամբ այդ շենքի շինությունների տարածքների ընդհանուր մակերեսների գումարին՝ արտահայտված տոկոսով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 2)- 1

Հարց 7

Ո՞ր իրավական ակտերով են կարգավորվում բազմաբնակարան շենքի կառավարման հարաբերությունները

1. ՀՀ օրենսդրությամբ
2. **ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով**
3. Օրենքով և միջազգային պայմանագրերով
4. ՀՀ կառավարության որոշումներով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1)- 2

Հարց 8

Կարո՞ղ են արդյոք Հայաստանի Հանրապետությունը և համայնքները հանդիսանալ բազմաբնակարան շենքի շինության սեփականատեր

1. Ոչ
2. **Այո**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1) – 2

Հարց 9

Ո՞վքեր կարող են լինել բազմաբնակարան շենքի շինության սեփականատերեր

1. Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ինչպես նաև մարզերը համայնքները
2. Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, քաղաքացիություն չունեցող անձինք
3. Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ
4. **Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս-1) – 4

Հարց 10

Շինության սեփականատիրոջ կողմից շինությունը վաճառելու դեպքում բազմաբնակարան շենքի մյուս շինությունների սեփականատերերը ունե՞ն դրա գնման նախապատվության իրավունքը

1. Ոչ
2. **Այո**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 4) – 1

Հարց 11

Բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույք չեն հանդիսանում

1. Տանիքը, աստիճանավանդակները, մուտքերը
2. Շենքը կրող կառուցվածքները

3. Շենքի շինությունները (ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող բնակարանները, ոչ բնակելի տարածքները)

4. Շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները, ձեղնահարկը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6) -3

Հարց 12

Բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով կարո՞ղ է պատկանել նաև տվյալ կամ այլ շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք, ինչպես նաև հողամաս, շարժական, անշարժ կամ ցանկացած այլ գույք

1. Այո
2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6) -1

Հարց 13

Իրավունք ու՞նի արդյոք շինության սեփականատերը առանձին օտարել ընդհանուր սեփականության իր բաժինը

1. Այո
2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3) -2

Հարց 14

Ու՞մ սեփականությունն են համարվում ընդհանուր բաժնային սեփականության բաժանելի բարելավումները

1. Որոշվում է բաժնային սեփականության սեփականատերերի ժողովի կողմից
2. Համայնքի սեփականությունը
3. Շինությունների բոլոր սեփականատերերի սեփականությունը
- 4. Այն սեփականատիրոջը, ով դրանք կատարել է, եթե այլ բան նախատեսված չէ բաժնային սեփականության սեփականատերերի ժողովի որոշմամբ**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 7) -4

Հարց 15

Իրավունք ունի արդյոք շինության սեփականատերն առանց մյուս սեփականատերերի համաձայնության, ոչ առևտրային նպատակներով, իր շինության պատերից բացել կամ փակել պատուհաններ, դռներ, մուտքեր և ծխնելույզներ

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 2) -1

Հարց 16

Ու՞մ պետք է սեփականատերը նախօրոք տեղեկացնի օրենսդրությամբ սահմանված նորմերի ու կանոնների պահպանմամբ հարակից շինությունների միջև սահմանները տեղաշարժելու կամ գոյություն ունեցող շինությունները երկու և ավելի շինությունների բաժանելու դեպքում, եթե նման տեղաշարժերը կամ բաժանումը առաջ չեն բերում շինությունների սեփականատերերի բաժնի փոփոխության

1. Մյուս շինությունների սեփականատերերին

2. Շենքի կառավարման մարմնին

3. Մյուս շինությունների սեփականատերերին և շենքի կառավարման մարմնին

4. Ոչ ոքի

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8) – 2

Հարց 17

Ո՞րն է ընդհանուր բաժնային սեփականության սեփականատերերի պարտականությունը

1. Այդ սեփականությունն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով պահպանելը և շահագործելը

2. Այդ սեփականությունը օրենքով սահմանված կարգով պահպանումը

3. Սեփականատերերի ժողովի մասնակցությունը

4. Այդ սեփականության շահագործման ուղղված ծախսերի կատարումը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1) -1

Հարց 18

Ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատեր ի՞նչ չափով է պարտավոր մասնակցել պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին, հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման և շահագործման այլ ծախսերին

1. Իր բաժնին համաչափորեն

2. Սեփականատերերի ժողովի կողմից որոշված կարգով

3. Ամենամսյա հաճախականությամբ

4. Պայամանագրի համաձայն

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 2) -1

Հարց 19

Սեփականատիրոջ կողմից իրեն պատկանող շինության չօգտագործումը կամ ընդհանուր բաժնային սեփականությունից օգտվելուց հրաժարվելը կարող է հիմք հանդիսանալ պարտադիր նորմերի իրականացման համար սահմանված ծախսերին նրա մասնակցելուց լրիվ կամ մասնակիորեն ազատվելու համար

1. Այո
2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 4) – 2

Հարց 20

Հակահրդեհային և սանիտարական միջոցառումները համարվում են արդյոք պարտադիր նորմեր

1. Ոչ
2. Այո

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 2) -2

Հարց 21

Ո՞վ է սահմանում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման համար պարտադիր նորմերը

1. Համայնքի ղեկավարը
2. Սեփականատերերի ժողովը
3. ՀՀ կառավարությունը
4. ՀՀ Ազգային ժողովը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 2) -3

Հարց 22

Կառավարման մարմինը կարո՞ղ է սահմանել բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը

1. Այո
2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 2) -2

Հարց 23

Ու՞մ պարտականությունն է շինության սեփականատերերի ժողովի կողմից «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով հաստատված նորմերից ելնելով կատարել համապատասխան վճարումներ կամ իր ուժերով ու միջոցներով իրականացնել պարտադիր նորմերի պահանջները

1. Բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի
2. Շինության բոլոր սեփականատերերի
3. Համայնքի ավագանու

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 3) – 2

Հարց 24

Ընդհանուր բաժնային սեփականության պահպանմանը նախատեսված աշխատանքների իրականացման համար վճարի չափը շինության սեփականատիրոջ համար սահմանվում է՝

1. Ելնելով շենքի բաժնային սեփականության մեջ նրա բաժնի չափից
2. Ելնելով շենքի բաժնային սեփականության մեջ ընդհանուր բաժնի չափից
3. Ելնելով շենքի բաժնային սեփականության մեջ բաժնի չափից
4. Շենքի բաժնային սեփականության մեջ ընդհանուր բաժնի 1/3-ի չափով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 4) – 1

Հարց 25

Շենքի կառավարման մարմինը ե՞րբ է ծանուցում շինության սեփականատերերին վճարման ենթակա գումարի չափի, ժամկետների և կարգի մասին

1. Նախօրոք
2. Անմիջապես
3. Չի ծանուցում
4. Երեք օր առաջ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 4) – 1

Հարց 26

Շինությունների սեփականատերերի կողմից պարտադիր նորմերի իրականացման համար նախատեսված վճարման ենթակա գումարի վճարումը քանի՞ անգամ ուշացնելու դեպքում շենքի կառավարման մարմինն իրավունք ունի դրա բռնագանձման համար դիմել դատարան

1. Մեկ անգամ
2. Երեք անգամ
3. Ոչ մի անգամ
4. Երկու անգամ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 5) – 4

Հարց 27

Եթե շինությունների սեփականատերերի կամ շինության կառավարման մարմնի կողմից պարտադիր նորմերը չկատարելու հետևանքով ուղղակի վտանգ է սպառնում անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին, ապա ստուգման կամ ահազանգ ստանալու դեպքում ո՞վ և ի՞նչ միջոցներով է պարտավոր վերացնել այդ վտանգը

1. Համապատասխան համայնքի ղեկավարը՝ համայնքի միջոցներով, նախօրոք այդ մասին ծանուցելով շինության սեփականատերերին և շենքի կառավարման մարմնին

2. Շենքի կառավարման մարմինը՝ համայնքի միջոցներով, նախօրոք այդ մասին ծանուցելով շինության սեփականատերերին

3. Համապատասխան համայնքի ղեկավարը՝ պետական միոցների հաշվին՝ նախօրոք այդ մասին ծանուցելով շենքի կառավարման մարմնին

Հարց 28

Շինությունների սեփականատերերի կամ շինության կառավարման մարմնի կողմից պարտադիր նորմերը չկատարելու հետևանքով անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող ուղղակի վտանգի վերացման աշխատանքների կատարման ծախսերը ա՛րդյոք պետք է հատուցվեն շենքի շինությունների սեփականատերերի կողմից՝

1.Ոչ

2.Այո

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 6) – 2

Հարց 29

Շինությունների սեփականատերերի կամ շինության կառավարման մարմնի կողմից պարտադիր նորմերը չկատարելու հետևանքով անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող ուղղակի վտանգի վերացման աշխատանքների կատարման ծախսերի հատուցման չափի հետ կապված վեճերը լուծվում են՝

1.Համայնքի ղեկավարի կողմից

2.Շենքի կառավարման մարմնի կողմից

3.Դատական կարգով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 6) – 3

Հարց 30

Ո՞ր մարմինն է հաստատում շինությունների սեփականատերերի կամ շինության կառավարման մարմնի կողմից պարտադիր նորմերը չկատարելու հետևանքով անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող ուղղակի վտանգի փաստը

1. **Տվյալ բնագավառում պետական լիազորված մարմինը**

2. Համայնքի ղեկավարը

3. Սեփականատերերի ժողովը

4. Համատիրությունը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 6) -1

Հարց 31

Ո՞վ է իրականացնում բազմաբնակարան շենքում պարտադիր նորմերի պահպանման ընդհանուր վերահսկողությունը

1. Սեփականատերերի ժողովը

2. **Համայնքի ղեկավարը**

3. ՀՀ կառավարությունը

4. Երևանի քաղաքապետը կամ համապատասխան մարզպետը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 7) -2

Հարց 32

Կարո՞ղ են բազմաբնակարան շենքի արդիականացման աշխատանքները հանգեցնել շենքի ընդհանուր բաժնային սեփականության նվազեցմանը

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10.1, մաս 2) -2

Հարց 33

Ու՞մ կողմից են սահմանվում բազմաբնակարան շենքի արդիականացման աշխատանքների դիմաց շինությունների սեփականատերերից գանձվող վճարումների չափը, վճարման կարգը և ժամկետները

1. Կառավարման մարմնի կողմից

2. Կառավարության որոշմամբ

3. Շինությունների սեփականատերերի ժողովի որոշմամբ

4. Համայնքի ղեկավարի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10.1, մաս 3) -3

Հարց 34

Եթե բազմաբնակարան շենքի արդիականացման աշխատանքներն իրականացվել են առանց օրենքով սահմանված կարգի կամ առանց սեփականատերերի համաձայնության, ապա այդ աշխատանքների մասով կատարված ծախսերը սեփականատերերի կողմից հատուցվու՞մ են

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10.1, մաս 4) -2

Հարց 35

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով նախատեսված արդիականացման դրույթները տարածվու՞մ են քանդման ենթակա վթարային՝ չորրորդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի վրա

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10.1, մաս 5) -2

Հարց 36

Ո՞րն է համարվում ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմինը

1. ՀՀ կառավարությունը

2. Շենքի շինությունների սեփականատերերի ժողովը

3. Համատիրությունը

4. Համայնքի ղեկավարը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1) -2

Հարց 37

Ո՞վ իրավունք ունի հրավիրելու շենքի շինությունների սեփականատերերի ժողով (բացառությամբ շենքի կառավարման մարմնի ընտրության)

1. Համատիրության նախագահը
2. Շինության յուրաքանչյուր սեփականատեր
3. **Շինության յուրաքանչյուր սեփականատեր և շենքի կառավարման մարմինը**
4. Համայնքի ղեկավարը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 2) -3

Հարց 38

Շինության յուրաքանչյուր սեփականատեր շենքի շինությունների սեփականատերերի ժողովում օժտված է

1. Իր շինության մակերեսին հավասար ձայների քանակով
2. Մեկ ձայնով
3. Համասեփականատերերի ձայների քանակով
4. **Իր բաժնին հավասար ձայների քանակով**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 3) -4

Հարց 39

Շենքի շինությունների սեփականատերերի ժողովի կողմից «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ իր լիազորությունների սահմաններում և համապատասխան ձայների առկայությամբ ընդունված որոշումը պարտադիր է բազմաբնակարան շենքի շինությունների բոլոր սեփականատերերի համար, այդ թվում՝ նրանց, ովքեր, անկախ պատճառներից, չեն մասնակցել քվեարկությանը կամ դեմ են քվեարկել որոշմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1. Պատշաճ ծանուցված չեն եղել
2. ՀՀ քաղաքացի չեն
3. **Պատշաճ ծանուցված չեն եղել, և պատշաճ ծանուցված լինելու դեպքում նրանց քվեարկությամբ այդ որոշումը կարող էր չընդունվել**
4. Դեմ են քվեարկել հիմնավորված պատճառաբանությամբ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 5) – 3

Հարց 40

Բազմաբնակարան շենքի արդիականացմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքների և միջոցառումների իրականացման մասին որոշումների ընդունումը համարվում է շենքի շինությունների սեփականատերերի ժողովի լիազորություն

1. Այո
2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 7, «է» կետ) -1

Հարց 41

Արդյո՞ք շենքի շինությունների սեփականատերերի ժողովի լիազորություններից են շենքի կառավարման մարմինների կողմից շինությունների սեփականատերերին տեղեկանքներ տալու կամ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով նախատեսված այլ ծառայություններ մատուցելու համար գանձվող գումարի չափի որոշումը

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 7, «Ժգ» կետ) – 1

Հարց 42

Շենքի շինությունների սեփականատերերի ժողովում ձայների ի՞նչ հարաբերակցությամբ են ընդունվում ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի կամ դրա մի մասի օտարման կամ գրավ դնելու մասին որոշումները

1. Միաձայն

2. Ձայների 2/3-ով

3. Ձայների 3/4 –ով

4. Ձայների կեսից ավելիով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 8) -1

Հարց 43

Շենքի շինությունների սեփականատերերի ժողովում ձայների ի՞նչ հարաբերակցությամբ են ընդունվում բազմաբնակարան շենքի կառավարման ձևի, կառավարման մարմնի ընտրության որոշումները

1. Միաձայն

2. Ձայների 2/3-ով

3. Ձայների 3/4 –ով

4. Ձայների կեսից ավելիով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 8) -4

Հարց 44

Ժողովի որոշումների փոփոխությունների համաձայնությունները ձայների ինչ հարաբերակցությամբ են կատարվում

1. Միաձայն

2. ձայների նույն հարաբերակցությամբ, ինչ որոշումների ընդունումը

3. Ձայների 2/3-ով

4. Ձայների 3/4 –ով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 12) -2

Հարց 45

Շենքի շինության սեփականատերն ընդհանուր ժողովի որոշումը կարող է վիճարկել

1. Դատական կարգով

2. Վարչական կարգով

3. Համայնքին՝ վերադասության կարգով

4. Համատիրությանը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 13) -1

Հարց 46

Շենքի շինությունների սեփականատերերի ժողովի հրավիրման օրվա, ժամի և վայրի մասին պատշաճ ծանուցված սեփականատերը կարող է պահանջել անվավեր ճանաչել ժողովի ընդունած որոշումը՝ անկախ ժողովին իր չմասնակցելու կամ չքվեարկելու պատճառներից

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 13) – 2

Հարց 47

Գումարման միջոցով հրավիրվող ժողովի օրակարգի մասին շինության սեփականատերերը ծանուցվում են

1. Ծանուցման տեքստը շենքի յուրաքանչյուր մուտքի առավել տեսանելի կամ դրա համար նախատեսված տեղում փակցնելու միջոցով

2. Անձամբ շինության յուրաքանչյուր սեփականատիրոջը տրամադրելու միջոցով

3. Ծանուցումն ուղարկելու միջոցով

4. **Ճիշտ են բոլոր պատասխանները**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1) – 4

Հարց 48

Ժողովի օրակարգը շինության սեփականատիրոջը պատշաճ ձևով չտալու կամ չուղարկելու հետևանքով նրան պատճառված վնասները շենքի շինությունների սեփականատերերի ժողով նախաձեռնողը պարտավոր է հատուցել

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 3) – 1

Հարց 49

Շենքի շինությունների սեփականատերերի ժողովի օրակարգում նշվում են նաև

1. Ժողով հրավիրողի անունը (անվանումը), ստորագրությունը, նրա բնակության կամ գտնվելու վայրը, նրա բաժնի չափը (եթե նա շինության սեփականատեր է)

2. Ժողովի հրավիրման օրը, ժամը և վայրը, օրակարգի վերաբերյալ առաջարկությունների ընդունման օրը և վայրը

3. Քննարկման ենթակա հարցերի ցանկը, օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու համար անհրաժեշտ ձայների քանակը, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն

4. **Ճիշտ են բոլոր պատասխանները**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 4) – 4

Հարց 50

Գումարման միջոցով Շենքի շինությունների սեփականատերերի ժողովի հրավերի մասին ինչ ժամկետում է ծանուցվում

1. Ոչ ուշ, քան դրա անցկացման օրվանից 7 օր առաջ

2. Ոչ ուշ, քան դրա անցկացման օրվանից 5 օր առաջ

3. Ոչ ուշ, քան դրա անցկացման օրվանից 3 օր առաջ

4. Ոչ ուշ, քան դրա անցկացման օրվանից 1 օր առաջ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 5) – 1

Հարց 51

Օրակարգում «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով չնշված, սակայն շենքի շինությունների սեփականատերերի ժողովի կողմից քննված հարցերի վերաբերյալ կայացված որոշումներն

1. Անվավեր են

2. Վավեր են

3. Վիճելի են

4. կարող են վավեր լինել, եթե ընդունվել է շինության սեփականատերերի ձայների մեծամասնությամբ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 8) – 1

Հարց 52

Օրակարգում «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով չնշված, սակայն շենքի շինությունների սեփականատերերի ժողովի կողմից քննված հարցերի վերաբերյալ կայացված որոշումները վավե՞ր են

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 8) – 2

Հարց 53

Շենքի կառավարման մարմինը, իսկ նրա բացակայության դեպքում՝ շենքի շինությունների սեփականատերերի ժողովը նախաձեռնողը, ի՞նչ ժամկետում են պարտավոր ժողովում ընդունված որոշումների պատճենները, ինչպես նաև ժողովը չկայանալու փաստի մասին տեղեկատվությունը սահմանված կարգով ծանուցել շինությունների սեփականատերերին

1. Երեք օրվա ընթացքում

2. Մեկ օրվա ընթացքում

3. Յոթ օրվա ընթացքում

4. Երկու օրվա ընթացքում

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 9) – 4

Հարց 54

Ժողովը կարող է համարվել անվավեր, եթե դրա օրակարգը պատշաճ ձևով չի ներկայացվել շինության սեփականատերերի 10 տոկոսից ավելիին

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 8) – 1

Հարց 55

Շենքի շինությունների սեփականատերերի ժողովը համարվում է անվավեր, եթե

1. Դրա օրակարգը պատշաճ ձևով չի ներկայացվել շինության սեփականատերերի 25 տոկոսից ավելիին

2. **Դրա օրակարգը պատշաճ ձևով չի ներկայացվել շինության սեփականատերերի 10 տոկոսից ավելիին**

3. Դրա օրակարգը պատշաճ ձևով չի ներկայացվել շինության սեփականատերերի 15 տոկոսից ավելիին

4. Դրա օրակարգը պատշաճ ձևով չի ներկայացվել շինության սեփականատերերի 5 տոկոսից ավելիին

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 8) – 2

Հարց 56

Եթե շինության սեփականատերերի ժողովի քննարկմանը ներկայացված որոշման նախագծի քվեարկության ժամանակ անհրաժեշտություն է առաջանում փոփոխել կամ լրացնել որոշման նախագիծը, ապա պե՞տք է կազմվի նոր նախագիծ

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 6) – 1

Հարց 57

Շենքի շինությունների սեփականատերերի ժողովում ընդունված որոշումների պատճենները ժողով նախաձեռնողը պարտավոր է ծանուցել շինությունների սեփականատերերին՝

1. Երկու օրվա ընթացքում

2. Երեք օրվա ընթացքում

3. Ընդունման օրվանը հաջորդող երեք օրվա ընթացքում

4. **Ընդունման օրվանը հաջորդող երկու օրվա ընթացքում**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 7) – 4

Հարց 58

Շենքի շինությունների սեփականատերերի ժողով նախաձեռնողը պարտավոր է ժողովում ընդունված որոշումների պատճենները ծանուցել շինությունների սեփականատերերին՝ նշելով դեմ քվեարկած սեփականատերերի անունները

1. Այո

2. Ոչ

Հարց 59

Շինության սեփականատերերին իրավունք ունե՞ն ցանկացած պահին լիազորություններ վերապահել շենքի կառավարման մարմնին կամ հետ վերցնել նրան տրված իր լիազորությունները

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 1) – 1

Հարց 60

Շինության սեփականատերերին իրավունք ունե՞ն առաջարկություններ ներկայացնել շենքի կառավարման մարմնին ընդհանուր բաժնային սեփականության կառավարման վերաբերյալ

1. Ոչ

2. Այո

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 1, «ե» կետ) -2

Հարց 61

Շինության սեփականատերերը պարտավո՞ր են կատարել սեփականատերերի ժողովի և կառավարման մարմնի որոշումները

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 2, «դ» կետ) -1

Հարց 62

Շինության սեփականատերերը պարտավոր են՝

1. Մասնակցել շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարմանը

2. Կատարել սահմանված պարտադիր վճարները

3. Բարեխղճորեն կատարել կառավարման մարմնի որոշումները

4. Կատարել սահմանված պարտադիր վճարները, ինչպես նաև «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով հաստատված այլ վճարները

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 2, «ա» կետ) – 4

Հարց 63

Ի՞նչ եղանակով են կատարվում «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով նախատեսված վճարները

1. Կանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձին, համատիրության նախագահի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով

2. Անկանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձին, բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով

3. Անկանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձին, համատիրության նախագահի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով

4. Կանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձին, բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 15.1, մաս 1) -2

Հարց 64

Ո՞վ է սահմանում «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով նախատեսված վճարների կատարման նպատակով բացված բանկային հաշվի վարման կարգը

1. Համատիրության նախագահը
2. Համայնքի ղեկավարը
- 3. ՀՀ կառավարությունը**
4. Սեփականատերերի ժողովը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 15.1, մաս 2) -3

Հարց 65

Վնաս կրած շինության սեփականատերը

1. Պարտավոր է վնասը վերացնել իր միջոցների հաշվին
2. Պարտավոր է օրենքով սահմանված կարգով դիմել համատիրությանը
- 3. Օրենքով սահմանված կարգով վնասի հատուցման պահանջի իրավունք ունի**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 3) -3

Հարց 66

Մինչև 4 սեփականատեր ունեցող շենքերում պարտադիր նորմերի ապահովումը կարո՞ղ է իրականացվել նաև շենքի շինությունների սեփականատերերի ժողովի միջոցով

- 1. Այո**
2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 1) -1

Հարց 67

Շինությունների սեփականատերերն իրավունք ունեն ընտրել ընդհանուր բաժնային սեփականության կառավարման մարմնի ձևը

1. Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ
2. Համատիրության նախագահի հայեցողությամբ
- 3. Ինքնուրույն**
4. Խորհրդակցելով համայնքի ղեկավարի հետ

Հարց 68

Արդյո՞ք հավատարմագրային կառավարումը համարվում է բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման ձև

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 3, «գ» կետ) -1

Հարց 69

Ի՞նչ ձևով կարող է իրականացվել ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը՝

1. Շինության սեփականատերերի կողմից ստեղծված իրավաբանական անձի՝ համատիրության միջոցով

2. Լիազորագրային կառավարչի (ներկայացուցչության) միջոցով.

3. Հավատարմագրային կառավարչի միջոցով

4. **Նշված բոլոր ձևերով**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 3) -4

Հարց 70

Լիազորագրային և հավատարմագրային կառավարիչ կարող է լինել

1. Միայն ֆիզիկական անձ

2. **Ֆիզիկական կամ իրավաբանական անձ**

3. Միայն իրավաբանական անձ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 6) -2

Հարց 71

Նոր ընտրված շենքի կառավարման մարմինը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել համապատասխան համայնքի ղեկավարին

1. **Երկու օրվա ընթացքում**

2. Հինգ օրվա ընթացքում

3. Մեկ շաբաթվա ընթացքում

4. Անհապաղ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 9) -1

Հարց 72

Համայնքի ղեկավարը շենքի կառավարման մարմնի՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով սահմանված փաստաթղթերի համաձայն վարում է տվյալ համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային կառավարման մարմինների

1. Անվանացանկ

2. Ռեեստր

3. **Գրանցամատյան**

Հարց 73

Ո՞րն է համարվում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման մասնագիտական գործունեություն

1. Բազմաբնակարան շենքի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց գործունեությունը

2. Բազմաբնակարան շենքի կառավարման գործառույթներ իրականացնող և մասնագիտական որակավորման պահանջներին համապատասխանող անձանց գործունեությունը

3. Բազմաբնակարան շենքի կառավարման գործառույթներ իրականացնելու ցանկություն հայտնաձևող մասնագիտական որակավորման պահանջներին համապատասխանող անձանց գործունեությունը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 17.1, մաս 1) -2

Հարց 74

Ո՞վ է սահմանում բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջները

1. Համայնքի ավագանին

2. ՀՀ վարչապետը

3. ՀՀ կառավարությունը

4. Համայնքի ղեկավարը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 17.1, մաս 2) -3

Հարց 75

Ո՞վ է սահմանում բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների հիման վրա անձանց վերապատրաստման և բազմաբնակարան շենքերի կառավարմանը նրանց ներգրավման կարգը

1. Համայնքի ավագանին

2. ՀՀ վարչապետը

3. Համայնքի ղեկավարը

4. ՀՀ կառավարությունը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 17.1, մաս 2) -4

Հարց 76

Ի՞նչ նպատակով են շինության սեփականատերերը ստեղծում համատիրություն

1. Ընդհանուր բաժնային գույքի կառավարման նպատակով

2. Սեփականատերերի ժողովի որոշումները կատարելու նպատակով

3. Ընդհանուր բաժնային գույքի պարտադիր նորմերի մասով կառավարման նպատակով

4. Շինությունների սեփականատերերին տեղեկանքներ տալու կամ այլ ծառայություններ մատուցելու համար

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1) -3

Հարց 77

Լիազորագրային կառավարման լիազորագիրը տրվում է, իսկ պայմանագիրը կնքվում է

1. Բանավոր ձևով

2. Գրավոր ձևով

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 19, մաս 1) -2

Հարց 78

Լիազորագրային կառավարիչն իր լիազորություններն իրականացնում և գործարքներ է կնքում՝

1. Համայնքի անունից

2. Հայաստանի Հանրապետության անունից

3. Բնակիչների անունից

4. Շինության սեփականատերերի անունից

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 19, մաս 4) -4

Հարց 79

Շենքի ընդհանուր բաժնային սեփականության հավատարմագրային կառավարումն իրականացվում է շինության սեփականատերերի և հավատարմագրային կառավարչի միջև կնքված գույքի հավատարմագրային կառավարման կամ ծառայությունների

1. Վճարովի մատուցման պայմանագրի համաձայն

2. Անվճար մատուցման պայմանագրի համաձայն

3. Գնման պայմանագրի համաձայն

4. Նվիրաբերության պայմանագրի համաձայն

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 1) -1

Հարց 80

Արդյո՞ք շենքի ընդհանուր բաժնային սեփականության հավատարմագրային կառավարումն իրականացվում է շինության սեփականատերերի և հավատարմագրային կառավարչի միջև կնքված գույքի հավատարմագրային կառավարման կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 1) – 1

Հարց 81

Հավատարմագրային կառավարման կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվում է՝

1. Գրավոր ձևով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում ենթակա է նոտարական վավերացման

2. Միայն գրավոր ձևով
3. Գրավոր ձևով և ենթակա է նոտարական վավերացման
4. Գրավոր ձևով և ենթակա չէ նոտարական վավերացման

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 2) – 1

Հարց 82

Շենքի ընդհանուր բաժնային սեփականության հավատարմագրային կառավարման կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում պետք է պարտադիր նշվեն իրենց բաժինը հավատարմագրային կառավարման հանձնող շինության սեփականատերերի

1. Անունները, ազգանունները (անվանումները), նրանց բնակության (գտնվելու) վայրը, լիազորությունների ժամկետը

2. Անունները, ազգանունները (անվանումները), նրանց բնակության (գտնվելու) վայրը, ստորագրությունները

3. Անունները, ազգանունները (անվանումները), նրանց բնակության (գտնվելու) վայրը, ընդհանուր գույքում բաժինը, ստորագրությունները, շինության հասցեն, տրվող լիազորությունների հստակ ցանկը

4. Անունները, ազգանունները (անվանումները), նրանց բնակության (գտնվելու) վայրը, հավատարմագրային կառավարչի անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու (բնակության) վայրը, լիազորությունների ժամկետը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 3) – 3

Հարց 83

Արդյո՞ք շենքի կառավարման մարմինը մասնակցում է շենքին, դրա հարակից տարածքներին առնչվող հարցերի քննարկմանը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում

1. Ոչ
2. Այո

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 1, «ը» կետ) -2

Հարց 84

Արդյո՞ք շենքի կառավարման մարմինը շինության սեփականատերերին ներկայացնում է ամսական, տարեկան և այլ հաշվետվություններ ու ծանուցումներ.

1. Այո
2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 1, «դ» կետ) -1

Հարց 85

Շինություններին և (կամ) ընդհանուր բաժնային սեփականությանը հասցված վնասների վերաբերյալ արձանագրությունները կազմում է

1. Համայնքը
- 2. Շենքի կառավարման մարմինը**
3. Կառավարությունը
4. Համատիրության նախագահը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 1, «ժէ» կետ) -2

Հարց 86

Կարո՞ղ է շենքի կառավարման մարմինը «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով նախատեսված կարգով շինության սեփականատերերից գանձել պարտադիր վճարները և սահմանված կարգով որոշված այլ վճարներ, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում իրականացնել անձանցից պարտադիր վճարների գանձման հետ կապված լիազորություններ

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 1, «բ» կետ) – 1

Հարց 87

Կառավարման մարմնի կողմից օրենքի պահանջների խախտմամբ կամ իր լիազորություններից դուրս շենքի կառավարման մարմնի կողմից կնքված գործարքը կամ իրականացված գործունեությունը

1. Համարվում է օրինական

2. Անօրինական է

3. Անվավեր է

4. Առոչինչ է

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 8) -3

Հարց 88

Շենքի կառավարմանն առնչվող փաստաթղթերը կառավարման մարմնի կողմից պահպանվում են

1. Մեկ տարի

2. Ոչ պակաս, քան 3 տարի

3. Մշտապես

4. Օրենսդրությամբ սահմանված ժամկետում, բայց ոչ պակաս, քան 3 տարի

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 9) -4

Հարց 89

Ո՞ր դեպքերում է թույլատրվում է մուտք գործել բազմաբնակարան շենքի փակ բնակարաններ

1. Զրամատակարարման, ջրահեռացման, ջեռուցման, գազամատակարարման, շենքի ընդհանուր այլ ցանցերի վթարների և օրենքով սահմանված այլ դեպքերում՝ եթե վթարների անհապաղ չվերացումը կարող է վնաս պատճառել այլ անձանց կյանքի,

առողջությանը և գույքին, իսկ վթարների կանխումը և վերացումն անհնար է իրականացնել առանց փակ բնակարանը մուտք գործելու

2. Ջրամատակարարման, ջրահեռացման, ջեռուցման, գազամատակարարման, շենքի ընդհանուր այլ ցանցերի վթարների և այլ դեպքերում՝ եթե վթարների անհապաղ չվերացումը կարող է վնաս պատճառել այլ անձանց գույքին և առողջությանը

3. Միայն ջրամատակարարման, ջրահեռացման, ջեռուցման, գազամատակարարման, շենքի ընդհանուր այլ ցանցերի վթարների դեպքերում

4. Ջրամատակարարման, ջրահեռացման, ջեռուցման, գազամատակարարման, շենքի ընդհանուր այլ ցանցերի վթարների և օրենքով սահմանված այլ դեպքերում՝ եթե վթարների անհապաղ չվերացումը կարող է վնաս պատճառել այլ անձանց գույքին և ընդհանուր բաժնային սեփականությանը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, մաս 1) -1

Հարց 90

Վթարի դեպքերում փակ բնակարան մուտք գործելու համար օրենքով նախատեսված մարմնի ներկայացուցիչները առանց ո՞ր մարմնի ներկայացուցչի չեն կարող մուտք գործել

1. Վթարները վերացնող և շենքի ընդհանուր ցանցերը սպասարկող (այդ ցանցերով ծառայություններ մատուցող) կազմակերպությունների

2. Դատախազության

3. Ոստիկանության

4. Բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, մաս 2) -3

Հարց 91

Բազմաբնակարան շենքի փակ բնակարան մուտք գործելու դեպքում կարո՞ղ է անձը մուտք գործել բնակարանի այլ հատվածներ, օգտվել բնակարանում գտնվող գույքից, կապի և այլ միջոցներից, էլեկտրաէներգիայի սնուցման կետերից, եթե դա պայմանավորված չէ վթարի վերացման անհրաժեշտությամբ

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, մաս 2) -2

Հարց 92

Բազմաբնակարան շենքի փակ բնակարանի մուտքի դռան, վթարների վերացման և փակ բնակարան մուտք գործելու նպատակով բնակարանի վնասված մասերի վերանորոգման հետ կապված ծախսերը այդ բնակարանի սեփականատերը (վարձակալը) ի՞նչ չափով է փոխհատուցում

1. Իր հայեցողությամբ նախատեսված չափերով

2. Լիազորված անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված համապատասխան արձանագրությամբ նախատեսված չափերով

3. Իր հնարավորության սահմաններում

Հարց 93

Ճի՞շտ է արդյոք, որ բազմաբնակարան շենքի փակ բնակարաններում վթարների կանխարգելման կամ վերացման, ինչպես նաև փակ բնակարան մուտք գործելու հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասները ենթակա չեն փոխհատուցման օրենքով սահմանված կարգով

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, մաս 4) – 2

Հարց 94

Խոշոր է համարվում այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքներ, որոնք կապված են շենքի կառավարման մարմնի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որոնց արժեքը կազմում է շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման տարեկան բյուջեի

1. 15 տոկոսից ավելին

2. 20 տոկոսից ավելին

3. 10 տոկոսից ավելին

4. կեսից ավելին

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 23, մաս 1) – 2

Հարց 95

Ե՞րբ է կառավարչի կողմից պատրաստվում հաշվետվություն՝ շինությունների սեփականատերերի կողմից անվանական վճարումների, նախատեսված և իրականացված աշխատանքների ընթացքի վերաբերյալ

1. Յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 10-ը

2. Յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 5-ը

3. Յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 20-ը

4. Յուրաքանչյուր ամսվա համար ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 15-ը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 24) – 4

Հարց 96

Շենքի կառավարման մարմինը կրու՞մ է լրիվ գույքային պատասխանատվություն իր մեղքով շինության սեփականատերերին պատճառած վնասի համար

1. Ոչ

2. Այո

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 25) – 2

Հարց 97

Շենքի կառավարման մարմնի լիազորությունները դադարում են՝

1. Շենքի կառավարման մարմինն լիազորագրով կամ պայմանագրով տրված լիազորությունների ժամկետը լրանալու հաջորդ օրվանից
2. Ժողովի որոշմամբ շենքի այլ կառավարման ձև կամ մարմին ընտրվելու հաջորդ օրվանից
3. շենքի կառավարման մարմնի՝ իր լիազորությունները վաղաժամկետ դադարելու մասին ծանուցում տալու օրվանից մեկ ամիս հետո

4. Բոլոր պատասխանները ճիշտ են

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 1) -4

Հարց 98

Արդյո՞ք ֆիզիկական անձ հանդիսացող շենքի կառավարման մարմնի մահվան կամ իրավաբանական անձ հանդիսացող շենքի կառավարման մարմնի լուծարման օրվանից շենքի կառավարման մարմնի լիազորությունները դադարում են

1. Այո
2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 1, «ե» կետ) -1

Հարց 99

Լիազորությունները դադարած շենքի կառավարման մարմինը նոր կառավարման մարմինն ստեղծվելու օրվանից ի՞նչ ժամկետում է պարտավոր շենքի կառավարման մարմնի փաստաթղթերը, շենքի կառավարման ընթացքում գոյացած ֆինանսական միջոցները և գույքը հանձնման-ընդունման ակտով հանձնել շենքի նոր կառավարման մարմնին

1. իր լիազորությունները դադարելուց հետո հինգ օրվա ընթացքում
2. շենքի նոր կառավարման մարմինն ստեղծվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում
3. **շենքի նոր կառավարման մարմինն ստեղծվելու օրվանից երկու օրվա ընթացքում**
4. շենքի նոր կառավարման մարմինն ստեղծվելու պահից՝ անհապաղ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 3) - 3

Հարց 100

Ու՞մ են ի պահ հանձնվում շենքի կառավարման մարմնի գործառույթներն իրականացնող ֆիզիկական անձի մահվան կամ իրավաբանական անձի լուծարման դեպքում շենքի կառավարման մարմնի փաստաթղթերը, շենքի կառավարման ընթացքում գոյացած ֆինանսական միջոցները և գույքը

1. Համայնքի ղեկավարին
2. **Նոտարին**
3. Շենքի սեփականատերերից որևէ մեկին
4. Իրավահաջորդին

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 4) -2

Հարց 101

Գնորդն իրավունք ունի արդյոք ծանոթանալ շենքի ընդհանուր սեփականության կառավարման համար նախատեսված տարեկան բյուջեին և նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությանը

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 27, մաս 3) -1

Հարց 102

Գնորդն իրավունք ունի ծանոթանալ

1. շենքի ընդհանուր սեփականության կառավարման համար նախատեսված տարեկան բյուջեին և նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությանը

2. շենքի կառավարումն իրականացնող իրավաբանական անձի կանոնադրությանը,

3. շենքի կառավարման մարմնին տրված լիազորագրին կամ պայմանագրին

4. Բոլոր պատասխանները ճիշտ են

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 27, մաս 3) – 4

Հարց 103

Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման և պահպանության ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է

1. Տարեկան բյուջեի միջոցով

2. Պետական բյուջեի միջոցով

2. Համայնքի միջոցների հաշվին

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29, մաս 1) – 1

Հարց 104

Կարո՞ղ է տարեկան բյուջեն տարվա ընթացքում փոխվել

1. Այո, միայն ժողովի որոշմամբ

2. Այո, ցանկացած պահի

3. Չի կարող փոփոխվել

4. Կարող է փոփոխվել կառավարչի նախաձեռնությամբ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29, մաս 1) – 1

Հարց 105

Ինչ ժամկետի համար է հաստատվում տարեկան բյուջեն

1. Եռամսյակային համամասնությամբ

2. Մեկ տարվա համար՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը

3. Կիսամյակային համամասնությամբ՝ հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29, մաս 1) – 2

Հարց 106

Ի՞նչն է հաշվի առնվում բյուջեի նախագիծը կազմելիս և հաստատելիս

1. շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման և շահագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև շենքի կառավարման մարմնի պահպանման ծախսերը

2. միայն շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման ծախսերը

3. միայն շենքի ընդհանուր բաժնային սեփականության շահագործման անհրաժեշտությունը

4. շենքի կառավարման մարմնի պահպանման ծախսերը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29, մաս 2) – 1

Հարց 107

Բյուջեի եկամուտները գոյանում են՝

1. Շինության սեփականատերերի կողմից պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված վճարումներից և այլ վճարումներից

2. Ընդհանուր բաժնային սեփականությունն օտարելու կամ այն վարձակալության (օգտագործման) հանձնելու դիմաց ստացված եկամուտներից

3. Պետության կամ համայնքի կողմից տրված սուբսիդիաներից և դոտացիաներից

4. Բոլոր պատասխանները ճիշտ են

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29, մաս 3) – 4

Հարց 108

Արդյո՞ք բյուջեով կարող են նախատեսվել պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերը և ընդհանուր բաժնային սեփականության գույք հանդիսացող շինության վերակառուցման ու վերանորոգման ծախսեր

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29, մաս 4, կետ «բ», «դ») – 1

Հարց 109

Արդյո՞ք բյուջեով կարող են նախատեսվել աշխատանքի վարձատրությանն ուղղված ծախսեր

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29, մաս 4, կետ «ժբ») – 1

Հարց 110

Շենքի կառավարման մարմինն ընթացիկ տարվա բյուջեն ինչի՞ հիման վրա է կազմում

1. նախահաշվի հիման վրա

2. նախագծի հիման վրա

3. նախորդ տարվա հաշվետվությունների հիման վրա

Հարց 111

Շենքի նորընտիր կառավարման մարմինը ընտրվելուց հետո՝ շենքի բյուջեի բացակայության դեպքում, քանի՞ օրվա ընթացքում է ներկայացնում ընթացիկ տարվա բյուջեի նախագիծը

1. 15 օրվա ընթացքում
2. 10 օրվա ընթացքում
3. 30 օրվա ընթացքում
4. **20 օրվա ընթացքում**

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 30) – 4

Հարց 112

Շենքի շնությունների սեփականատերերի ժողովի կողմից մեկամսյա ժամկետում շենքի նորընտիր կառավարման մարմնի ներկայացված տարեկան բյուջեի նախագիծը չընդունվելու դեպքում ինչպե՞ս է հաշվարկվում նոր բյուջեն

1. Համայնքի ղեկավարի որոշմամբ
2. **Պարտադիր նորմերի գծով համայնքի ավագանու կողմից տվյալ տարվա համար սահմանված անհրաժեշտ վճարների հիման վրա**
3. Կառավարման մարմնի կողմից
4. Սեփականատերերի ժողովի կողմից՝ պարտադիր նորմերի գծով տվյալ տարվա համար սահմանված անհրաժեշտ վճարների հիման վրա

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 30) – 2

Հարց 113

Ո՞վ է կազմում ընթացիկ տարվա բյուջեն

1. Համայնքի ղեկավարը
2. Համայնքի ավագանին
3. **Կառավարման մարմինը**
4. Սեփականատերերի ժողովը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 30) – 3

Հարց 114

Ի՞նչ ժամկետում է շենքի կառավարման մարմինը հաստատված նոր բյուջեի մասին ծանուցում շենքի սեփականատերերին

1. **Երկօրյա ժամկետում**
2. Անմիջապես
3. Եռօրյա ժամկետում
4. Չի ծանուցում

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 30) – 1

Հարց 115

Արդյո՞ք ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը համարվում են բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետական (համայնքային) աջակցության հիմնական ուղղություններից

1. Այո

2. Ոչ

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31, 1-ի մաս, կետ «բ») - 1

Հարց 116

Բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետական (համայնքային) աջակցության հիմնական ուղղություններից է իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը

1. Ոչ

2. Այո

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 1, կետ «ա») -2

Հարց 117

Ո՞վ է սահմանում նպատակային ծրագրերի իրականացման պայմանները, առանձնահատկությունները, կարգը

1. Կառավարությունը

2. Համայնքի ավագանին

3. **Պետական նպատակային ծրագրերի դեպքում՝ Կառավարությունը, համայնքային նպատակային ծրագրերի դեպքում՝ համայնքի ավագանին**

4. Սեփականատերերի ժողովը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 3) -3

Հարց 118

Ո՞վ է սահմանում նպատակային ծրագրերի ֆինանսավորմանը պետության (համայնքի), ինչպես նաև շենքի շինությունների սեփականատերերի մասնակցության չափը և եղանակը

1. **Պետական նպատակային ծրագրերի դեպքում՝ Կառավարությունը, համայնքային նպատակային ծրագրերի դեպքում՝ համայնքի ավագանին**

2. Համայնքի ղեկավարը

3. ՀՀ վարչապետը

4. Սեփականատերերի ժողովը

(«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 3) -1

«ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հարց 1

Համատիրությունը քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված և իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով ստեղծված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող

1. **Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կոոպերատիվ է**
2. Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կոոպերատիվ է
3. Ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կոոպերատիվ է
4. Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բաժնետիրական ընկերություն է

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1) -1

Հարց 2

Ի՞նչ նպատակով է հիմնադրվում համատիրությունը

1. Բազմաբնակարան շենքի կամ շենքերի բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով

2. Բազմաբնակարան շենքի շինության սեփականատերերի գույքի կառավարման նպատակով

3. Բազմաբնակարան շենքի կամ շենքերի բաժնային սեփականություն հանդիսացող գույքի պահպանման նպատակով

4. Բազմաբնակարան շենքի բաժնային սեփականություն հանդիսացող գույքի պահպանման նպատակով

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1) -1

Հարց 3

Համատիրության գործունեության հիմնական նպատակներից են

1. Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարումը

2. Շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր շահերը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, դատական և այլ իրավասու մարմիններում պաշտպանելը

3. Կոմունալ ծառայություններ մատուցողների հետ շենքի կառավարման մարմնի կողմից պայմանագրերի կնքումը

4. Նշված բոլոր տարբերակները

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 5) -4

Հարց 4

Համատիրության սեփականությունը ձևավորվում է՝

1. Նրա անդամների կողմից մուծված փայավճարներից, ինչպես նաև համատիրության գործունեության ընթացքում ստեղծված և ձեռք բերված գույքից

2. Համատիրության գործունեության ընթացքում ստեղծված և ձեռք բերված գույքից

3. Նրա անդամների կողմից մուծված փայավճարներից

4. Համատիրությունը սեփականություն չունի

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 1) -1

Հարց 5

Համատիրության անդամը համատիրությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ ունի՝ իրավունքներ

1. Այո

2. Ոչ

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 3) -2

Հարց 6 Համատիրությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է

1. Ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքով

2. Իրեն պատկանող գույքով

3. Համատիրության անդամ հանդիսացող անձանց պատկանող գույքով

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1) -2

Հարց 7 Համատիրության պարտավորությունների համար համատիրության անդամը համատիրության հանդեպ կրում է պատասխանատվություն

1. Իր ունեցած պարտավորությունների չափով

2. Իրեն պատկանող գույքով

3. Չի կրում

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 2) -1

Հարց 8 Համատիրությունը կրում է պատասխանատվություն իր անդամների պարտավորությունների համար

1. Այո

2. Ոչ

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 3) -2

Հարց 9

Համատիրությունը ստեղծվում է

1. Գրանցման միջոցով

2. Համայնքի կողմից ձևավորման միջոցով

3. Սեփականատերերի կողմից ձևավորման միջոցով

4. Հիմնադրման միջոցով

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1) -4

Հարց 10

Համատիրությունը կարող է ստեղծվել մի քանի բազմաբնակարան շենքերում

1. Այո

2. Ոչ

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 3) -1

Հարց 11

Բազմաբնակարան շենքերում համատիրությունը կարող է ստեղծվել

1. Յուրաքանչյուր շենքում առնվազն ընդհանուր բաժնային սեփականության մեջ 75 և ավելի տոկոս բաժին ունեցող շինությունների սեփականատերերի անդամությամբ

2. Յուրաքանչյուր շենքում առնվազն ընդհանուր բաժնային սեփականության մեջ 100 տոկոս բաժին ունեցող շինությունների սեփականատերերի անդամությամբ

3. Յուրաքանչյուր շենքում առնվազն ընդհանուր բաժնային սեփականության մեջ 50 և ավելի տոկոս բաժին ունեցող շինությունների սեփականատերերի անդամությամբ

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 4) -3

Հարց 12

Համատիրության հիմնադրման հետ կապված որոշումը հիմնադիրների կողմից պետք է ընդունվի

1. Ձայների կեսից ավելիով

2. Միաձայն

3. Ձայների 2/3-ով

4. Ձայների 3/4-ով

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 4) -2

Հարց 13

Համատիրության հիմնադիր փաստաթուղթը

1. Սեփականատերերի ժողովի որոշումն է
2. Համայնքի ղեկավարի որոշումն է
3. Համայնքի ավագանու որոշումն է
4. **Համատիրության կանոնադրությունն է**

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1) -4

Հարց 14

Համատիրության կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը հիմնադիրների կողմից ընդունվում է

1. Ձայների կեսից ավելիով
2. Ձայների 75 տոկոսով

3. Միաձայն

4. Ձայների 2/3-ով

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1) -3

Հարց 15

Համատիրությունն ստեղծված է համարվում

1. Կանոնադրության հաստատման պահից
2. Հիմնադրման պահից
3. **Օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից**
4. Հիմադիր ժողովի անցկացման օրվանից

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 2) -3

Հարց 16

Համատիրության կառավարման մարմիններն են

1. Համատիրության անդամների ընդհանուր ժողովը, վարչությունը և նախագահը
2. **Համատիրության անդամների ընդհանուր ժողովը, վարչությունը, նախագահը և կառավարիչը**
3. Համատիրության անդամների ընդհանուր ժողովը, վարչությունը, վարչության անդամները և կառավարիչը
4. Համատիրության անդամների ընդհանուր ժողովը, վարչությունը և կառավարիչը

(«Համադիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 13) -2

Հարց 17

Համատիրության կառավարման բարձրագույն մարմինն է

1. Նախագահը
2. Վարչությունը

3. Համատիրության անդամների ընդհանուր ժողովը

4. Կառավարիչը

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 1) -3

Հարց 18

Համատիրության յուրաքանչյուր անդամ համատիրության անդամների ընդհանուր ժողովում ունի մեկ ձայն

1. Այո

2. Ոչ

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 2) -1

Հարց 19

Համատիրության անդամների ընդհանուր ժողովի իրավասությունները որոշվում են

1. Օրենքներով սահմանված կարգով

2. «Համատիրության մասին» օրենքով և համատիրության կանոնադրությամբ

3. Կառավարության որոշումներով

4. Համայնքի ավագանու որոշմամբ

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 3) -2

Հարց 20

Համատիրության կանոնադրության փոփոխումը համատիրության անդամների ընդհանուր ժողովի իրավասություններից է

1. Ոչ

2. Այո

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 4, կետ «ա») -2

Հարց 21

Համատիրության անդամների ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են

1. Փակ քվեարկությամբ

2. Բաց քվեարկությամբ, եթե համատիրության կանոնադրությամբ որոշումների ընդունման այլ կարգ նախատեսված չէ

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 9) -2

Հարց 22

Համատիրության անդամների հերթական ընդհանուր ժողովը հրավիրում է

1. Համատիրության նախագահը

2. Սեփականատերը

3. Կառավարիչը

4. Համայնքի ղեկավարը

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 15) -1

Հարց 23

Եթե սահմանված ժամկետում համատիրության անդամների ընդհանուր տարեկան ժողով չի հրավիրվում, կամ հրավիրված ժողովը իրավազոր չէ, ապա կարող է հրավիրվել նոր ժողով՝ նախորդի հրավիրման պահից

1. Մեկամսյա ժամկետում
2. 3-օրյա ժամկետում
3. Մեկ շաբաթվա ընթացքում
4. **10-օրյա ժամկետում**

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 15) -4

Հարց 24

Մինչև համատիրության պետական գրանցման պահը համատիրություն հիմնադրելու մասին պայմանագիր կնքած անձինք համարվում են համատիրության հիմնադիր

1. Այո
2. Ոչ

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 1) -1

Հարց 25

Համատիրության պետական գրանցման պահից համատիրության փայի նկատմամբ սեփականության իրավունք չունեցող անձինք համարվում են համատիրության անդամներ

1. Այո
2. Ոչ

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 2) -1

Հարց 26

Համատիրության անդամի անդամությունը դադարում է

1. Նրա դիմումի համաձայն
2. Համատիրության անդամ ֆիզիկական անձի մահվամբ կամ իրավաբանական անձի լուծարմամբ
3. Համատիրության անդամի՝ համապատասխան շենքում շինության նկատմամբ սեփականության իրավունքի դադարմամբ

4. Նշված բոլոր տարբերակները ճիշտ են

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 1) -3

Հարց 27

Շենքում շինության նկատմամբ սեփականության իրավունքը կորցրած անձի համատիրության անդամությունը դադարեցված է համարվում՝

1. **Սեփականության իրավունքը դադարելու հաջորդ օրվանից**
2. Սեփականության իրավունքը դադարելու օրվանից
3. Սեփականության իրավունքը դադարելուն հաջորդող տասներորդ օրվանից

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 3) -1

Հարց 28

Ու՛մ որոշմամբ կարող է փոփոխվել համատիրության տարեկան հաշվեկշիռը և բազմաբնակարան շենքի տարեկան բյուջեն

1. Համատիրության նախագահի
2. Բազմաբնակարան շենքի սեփականատերերի
3. **Համատիրության անդամների ընդհանուր ժողովի**
4. Կառավարչի

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 27) -3

Հարց 29

Տնտեսական ծախսերը (փոստային, կապի, տպագրական, գրասենյակային պիտույքների ապահովման և այլն) համարվո՞ւմ են համատիրության միջոցների ծախսերի ուղղություններից

1. Այո
2. Ոչ

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 29) -1

Հարց 30

Յուրաքանչյուր տարվա համար կառավարիչն համատիրության անդամների ընդհանուր ժողով է ներկայացնում

1. Այդ տարվա համատիրության ֆինանսական հաշվետվությունը, ինչպես նաև համատիրության հաջորդ տարվա եկամուտները և ծախսերը

2. Տվյալ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունը, ինչպես նաև հաջորդ եռամսյակի եկամուտները և ծախսերը

3. Նախորդ տարվա համատիրության ֆինանսական հաշվետվությունը, ինչպես նաև հաջորդ տարվա եկամուտները և ծախսերը

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 30) -1

Հարց 31

Արդյո՞ք համատիրություններն իրավունք ունեն միանալ կամ միաձուլվել

1. Այո
2. Ոչ
3. Միանալ այո, միաձուլվել՝ ոչ
4. Միաձուլվել այո, միանալ՝ ոչ

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 2) -1

Հարց 32

Համատիրության լուծարմամբ դրա գործունեությունը դադարում է

1. Իրավունքները և պարտականությունները սեփականատերերին անցնելու եղանակով
2. Իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու եղանակով

3. Առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու

Հարց 33

Համատիրության լուծարման ընթացքում շենքի կառավարման լիազորությունները դադարում են

1. Այո
2. Ոչ

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 32, մաս 4) -1

Հարց 34

Համատիրության լուծարման դեպքում համատիրության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը ու՞մ սեփականությունն է դառնում

1. Համատիրության նախագահի
2. Համատիրության անդամների
3. Բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր համատեղ սեփականություն

4. Համապատասխան բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 32, մաս 4) -4

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հարց 1

Համայնքի պարտադիր խնդիրներից է

1. Համայնքում բնակապահովման ծրագրերի իրականացումը
2. Համայնքի բազմաբնակարան շենքերի կառավարումը
3. **Համայնքում բնակարանային շինարարության խթանումը**

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 12, մաս 1, կետ 8) – 3

Հարց 2

Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանում է

1. **Համայնքի ավագանին**
2. Համայնքի ղեկավարը
3. Պետական եկամուտների կոմիտեն
4. Ֆինանսների նախարարությունը

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 18, մաս 1, կետ 19) – 1

Հարց 3

Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատում է

1. Համայնքի ղեկավարը
2. **Համայնքի ավագանին, օրենքով սահմանված դեպքերում**
3. Քաղաքաշինության կոմիտեի նախագահը
4. Ճարտարապետների պալատի նախագահը

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 18, մաս 1, կետ 30) – 2

Հարց 4

Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջների վերաբերյալ որոշում ընդունում է

1. Էկոնոմիկայի նախարարությունը

2. Համայնքի ղեկավարը

3. Համայնքի ավագանին

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 18, մաս 1, կետ 41.2) – 3

Հարց 5

Համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով աջակցում է

1. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ձևավորմանը

2. Բազմաբնակարան շենքերի կառավարմանը

3. Բազմաբնակարան շենքերի կառուցապատողներին

4. Բազմաբնակարան շենքերի կառավարիչներին

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 18) – 1

Հարց 6

Համայնքի ղեկավարը համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում

1. Այդ շենքերի ցուցակը

2. Պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերը

3. Պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների ցանկը

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 21) – 2

Հարց 7

Որ բազմաբնակարան շենքերի պահպանումն է կազմակերպում համայնքի ղեկավարը

1. Համայնքի տարածքում գտնվող բազմաբնակարան շենքերի

2. Այն շենքերի, որոնք չեն կառավարվում օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից

3. Լիազորարային կառավարիչների կողմից կառավարվող շենքերի

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 20) – 2

Հարց 8

Ի՞նչ չափով է համայնքի ղեկավարն ապահովում համայնքի մասնակցությունը բազմաբնակարան շենքերի սպասարկմանը

1. Տվյալ շենքում իր սեփականությունը հանդիսացող բնակարանների մակերեսին համապատասխան

2. Համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված չափով

3. Տվյալ շենքում իր սեփականությունը հանդիսացող բնակարանների քանակին համապատասխան

4. Տվյալ շենքի բնակարանների քանակին համապատասխան

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 18) – 3

Հարց 9

Արդյո՞ք բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ձևավորմանը աջակցելը համայնքի ղեկավարի լիազորությունն է

1. Ոչ

2. Այո

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 18) – 2

Հարց 10

Համայնքի ղեկավարը իրականացնում է

1. Համայնքի տարածքում գտնվող շինությունների հաշվառումը

2. Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների հաշվառումը

3. Համայնքի տարածքում գտնվող շենքերի ու շինությունների հաշվառումը

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 10) – 2

Հարց 11

Համայնքի ղեկավարը մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման

1. Ամենամյա և եռամյա ծրագրերը

2. Ամենամյա և հնգամյա ծրագրերը

3. Եռամյա և տարեկան ծրագրերը

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 11) – 2

Հարց 12

Համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը կազմակերպում է

1. Համայնքի ավագանին

2. Համայնքի ղեկավարը

3. Կոմունալ ծառայության պետը

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 13) – 2

Հարց 13

Համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների պահպանումը, շահագործումը ապահովում է

1. Համայնքի ավագանին

2. Կոմունալ ծառայության պետը

3. Համայնքի ղեկավարը

4. Պետական գույքի կառավարման կոմիտեն

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 13) – 3

Հարց 14

Ու՞մ հաստատմանն են ներկայացվում համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների ամենամյա գույքագրման փաստաթղթերը

1. ՀՀ կառավարության
2. Համայնքի ղեկավարի
3. Համատիրության նախագահի
4. **Համայնքի ավագանու**

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 42, մաս 1, կետ 10) – 4

Հարց 15

Համայնքի տարածքում սեյսմիկ ռիսկը նվազեցնելու, արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ իրականացնում է

1. Ներքին գործերի նախարարությունը
2. **Համայնքի ղեկավարը**
3. Համայնքի ավագանին

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 41, մաս 2, կետ 7) – 2

Հարց 16

Բազմաբնակարան շենքերի բնակարանները և ոչ բնակելի տարածքները կարո՞ղ են դառնալ համայնքի սեփականություն

1. Այո
2. Ոչ

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 78, մաս 3) – 1

Հարց 17

Համայնքի ղեկավարի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի սպասարկման համար ո՞վ կարող է սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ

1. **Համայնքի ավագանու**
2. Համայնքի ղեկավարի
3. ՀՀ վարչապետի
4. ՀՀ կառավարության

(«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 88, մաս 1) – 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հարց 1

Երևանի զարգացման միամյա, հնգամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերի վերաբերյալ որոշում է ընդունում

- 1. Երևանի ավագանին**
2. Երևանի քաղաքապետը
3. Վարչական շրջանի ղեկավարը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 12, մաս 1, կետ 11) – 1

Հարց 2

Երևանի քաղաքաշինական կանոնադրության վերաբերյալ որոշումը ընդունում է

1. Երևանի քաղաքապետը
- 2. Երևանի ավագանին**
3. Քաղաքաշինության կոմիտեի նախագահը
4. Ճարտարապետների պալատի նախագահը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 12, մաս 1, կետ 34) – 2

Հարց 3

Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջների վերաբերյալ որոշում ընդունում է

1. Էկոնոմիկայի նախարարությունը
2. Երևանի քաղաքապետը
- 3. Երևանի ավագանին**

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 12, մաս 1, կետ 28) – 3

Հարց 4

Ո՞վ է սահմանում է Երևանի շենքերի և շինությունների, ինչպես նաև հողամասերի համարակալումը

1. Կառավարությունը
2. Վարչապետը
3. Երևանի ավագանին

4. Երևանի քաղաքապետը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք հոդված 52, մաս 1, կետ 4) – 4

Հարց 5

Տեղական հարկերի և տուրքերի (օրենքով սահմանված սահմաններում), ինչպես նաև քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց գանձվող վճարների տեսակների ու դրույքաչափերի մասին որոշման նախագծերը ավագանուն է ներկայացնում

1. Երևանի քաղաքապետը

2. Վարչական շրջանի ղեկավարը

3. Համայնքի ավագանու անդամը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 53, մաս 1, կետ 7) – 1

Հարց 6

Ու՛մ հաստատմանն է Երևանի քաղաքապետը ներկայացնում վարչական շրջանի ղեկավարի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանման նպատակով պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերը.

1. Վարչական շրջանի ղեկավարի

2. ՀՀ կառավարության

3. Երևանի ավագանու

4. ՀՀ վարչապետի

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք հոդված 55, մաս 1, կետ 3) – 3

Հարց 7

Ո՞վ է վերահսկողություն իրականացնում Երևանի տարածքում գտնվող շենքերի, շինությունների նպատակային օգտագործման և պահպանման նկատմամբ

1. ՀՀ կառավարության

2. Վարչական շրջանի ղեկավարը

3. ՀՀ վարչապետը

4. Երևանի քաղաքապետը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք հոդված 55, մաս 1, կետ 7) – 4

Հարց 8

Երևանում բնակարանային և այլ շինարարություն կազմակերպում է

1. Երևանի քաղաքապետն՝ իր իրավասության սահմաններում

2. Քաղաքաշինության կոմիտեն

3. Երևանի ավագանին

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք հոդված 55, մաս 1, կետ 4) – 1

Հարց 9 Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում Երևանի քաղաքապետն ի՞նչ պատվիրակված լիազորություններ է իրականացնում

1) կառավարում է իր կառավարմանը հանձնված պետական սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, գազի, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և ճարտարագիտական այլ կառույցների շահագործումը

2) իր կառավարմանը հանձնված պետական սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, գազի, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և ճարտարագիտական այլ կառույցների շահագործումը

3) կառավարում է պետական սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, գազի, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և ճարտարագիտական այլ կառույցների շահագործումը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք հոդված 55, մաս 2, կետ 1) – 1

Հարց 10

Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշումը ընդունում է

1. Երևանի քաղաքապետը

2. Վարչական շրջանի ղեկավարը

3. Երևանի ավագանին

4. Կադաստրի կոմիտեն

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք հոդված 55, մաս 2, կետ 2) – 1

Հարց 11

Օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով համատիրությունների հիմնադիր ժողովները նախապատրաստում և դրանց անցկացմանը, ինչպես նաև օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքերի կառավարման այլ մարմինների ձևավորմանը աջակցում է

1. Երևանի քաղաքապետը

2. Վարչական շրջանի ղեկավարը

3. Երևանի ավագանին

4. Երևանի ավագանու անդամը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք հոդված 94, մաս 1, կետ 7) – 2

Հարց 12

Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարը կազմակերպում է այն բազմաբնակարան շենքերի պահպանումը, որոնք չեն կառավարվում համատիրությունների կամ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից

1. Այո

2. Ոչ

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք հոդված 94, մաս 1, կետ 8) – 1

Հարց 14

Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարը իրականացնում է

1. Համայնքի տարածքում գտնվող շինությունների հաշվառումը

2. Երևանի սեփականություն համարվող, իր տնօրինմանը հանձնված շենքերի ու շինությունների հաշվառումը

3. Համայնքի տարածքում գտնվող շենքերի ու շինությունների հաշվառումը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 94, մաս 1, կետ 3) – 2

Հարց 15

Վարչական շրջանի ղեկավարն ապահովում է՝

1. Իր տնօրինության տակ գտնվող՝ Երևանի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը

2. Երևանի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի աճուրդը

3. Երևանի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների սեփականաշնորհումը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 94, մաս 1, կետ 5) – 1

Հարց 16

Վարչական շրջանի ղեկավարն ապահովում է՝

1. Երևանի սեփականություն չհամարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի վերակառուցումը

2. Իր տնօրինության տակ գտնվող՝ Երևանի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների նորոգումը

3. Երևանի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների օտարումը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 94, մաս 1, կետ 5) – 2

Հարց 17

Վարչական շրջանի ղեկավարը կազմակերպում է՝

1. Վարչական շրջանի կոմունալ տնտեսության աշխատանքը

2. Կոմունալ ծառայության պետին չվերապահված՝ վարչական շրջանի կոմունալ տնտեսության աշխատանքը

3. Քաղաքապետին չվերապահված՝ վարչական շրջանի կոմունալ տնտեսության աշխատանքը

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 94, մաս 1, կետ 4) – 3

Հարց 18

Ո՞վ է իրականացնում Երևանի սեփականություն համարվող, իր տնօրինմանը հանձնված շենքերի ու շինությունների հաշվառումը, կազմում սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

1. Երևանի քաղաքապետը

2. Երևանի ավագանին

3. **Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարը՝ իր տնօրինմանը հանձնված շենքերի ու շինությունների մասով**

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 94, մաս 1, կետ 3) – 3

Հարց 19 Ու՞մ լիազորությունն է Երևանի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառման իրականացումը

1. Երևանի քաղաքապետի

2. **Վարչական շրջանի ղեկավարի՝ իր տնօրինմանը հանձնված շենքերի ու շինությունների մասով**

3. Երևանի քաղաքապետի

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք, հոդված 94, մաս 1, կետ 3) –2

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հարց 1

Վարչական մարմիններ են

1. Գործադիր իշխանության հանրապետական մարմինները՝ նախարարությունները, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները

2. Տարածքային կառավարման մարմինները՝ մարզպետները

3. Տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը

4. Բոլոր պատասխանները ճիշտ են

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 3) – 4

Հարց 2

Վարչարարություն է

1. Վարչական մարմինների գործունեությունը, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ

2. Վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ

3. Վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ

4. Վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 3) – 2

Հարց 3

Վարչական մարմինները պարտավոր են

1. Հետևել ձևական պահանջների պահպանմանը

2. Անձանց ծանրաբեռնել պարտականություններով, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են

3. Անձանց չծանրաբեռնել պարտականություններով, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված չեն

4. Հետևել օրենքների պահպանմանը

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 4) – 4

Հարց 4

Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 5) – 1

Հարց 5

Վարչական մարմինները կարող են անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 1) – 2

Հարց 6

Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 2) – 1

Հարց 7

Եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա

1. Վերջիններս կարող են պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով

2. Վերջիններս պետք է ներկայացվեն լրացուցիչ կամ առանձնացված ձևով

3. Վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով

4. Ներկայացված փաստաթղթերը համարվում են անվավեր

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 2) – 3

Հարց 8

Եթե վարչական մարմինների կողմից անձանց տրված թույլտվությունները բովանդակային առումով ներառում են այլ թույլտվություններ, ապա դրանք նույնպես համարվում են տրված

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 3) – 1

Հարց 9

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա

1. Անձանցից պետք է պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ

2. Ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար

3. Տեղեկությունները կարող է համարել ոչ հավաստի

4. Փաստաթղթերը ներկայացրած անձանց հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 1) – 2

Հարց 10

Վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է

1. Գործել այնպես, որ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը

2. Գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը

3. Գործել այնպես, որ սեղմ ժամկետում, բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների արդյունավետ օգտագործումը

4. Գործել այնպես, որ ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների արդյունավետ օգտագործումը

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 11) – 2

Հարց 11

Ո՞ր վարչական մարմնի իրավասությանն է վերապահվում անշարժ գույքին վերաբերող հարցերի լուծումը

1. Որի տարածքում գտնվում է տվյալ անշարժ գույքը

2. Որը կարող է լուծել այդ հարցը

3. Որին դիմել է անշարժ գույքի սեփականատերը

4. Որի հարակից տարածքում գտնվում է տվյալ անշարժ գույքը

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 1) – 1

Հարց 12

Իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը որևէ իրավունք տրամադրելը կամ նրա վրա որևէ պարտականություն դնելը վերապահվում է այն վարչական մարմնի իրավասությանը, որի հարակից տարածքում իր գործունեությունն իրականացնում է իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 2) – 2

Հարց 13

Եթե որևէ հարցի լուծում վերապահված է միաժամանակ երկու և ավելի վարչական մարմինների իրավասությանը, ապա որ վարչական մարմինն է իրավասու

1. Վարչական մարմինը, որին անձը դիմել է

2. Վարչական մարմինը, որին անձը դիմել է, կամ որի նախաձեռնությամբ պետք է լուծվի այդ հարցը

3. Վարչական մարմինը, որի նախաձեռնությամբ պետք է լուծվի այդ հարցը

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 4) – 2

Հարց 14

Վարչական մարմինները պարտավոր են փոխադարձ օգնություն (այսուհետ՝ փոխօգնություն) տրամադրել միմյանց՝ իրենց լիազորություններն իրականացնելու համար:

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 1) – 1

Հարց 15

Վարչական մարմինների փոխօգնությունն ինչի՞ հիման վրա է տրամադրվում

1. Հայցող վարչական մարմնի հայտի հիման վրա

2. Հայցի հասցեատեր վարչական մարմնի հայտի հիման վրա

3. Հայցող և հայցի հասցեատեր վարչական մարմինների համաձայնության հիման վրա

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 1) – 1

Հարց 16

Հայցվող վարչական մարմինն իրավունք չունի տրամադրելու փոխօգնությունը, եթե՝

1. Փոխօգնություն տրամադրելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումը չի մտնում հայցվող վարչական մարմնի իրավասության մեջ

2. Չի ցանկանում տրամադրել տեղեկատվություն

3. Տեղեկատվության տրամադրումը ժամանակատար է

4. Ճիշտ են բոլոր պատասխանները

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 1, «բ» կետ) – 1

Հարց 17

Վարչական վարույթը վարչական մարմնի ի՞նչ գործունեություն է

1. Վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելուն ուղղված գործունեությունն է

2. Վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է

3. Վարչական ակտն անվավեր ճանաչելուն ուղղված գործունեությունն է

4. Վարչական ակտն վերանայելուն ուղղված գործունեությունն է

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 19) – 2

Հարց 18

Վարչական վարույթը հարուցվում է

1. Միայն անձի (անձանց) դիմումի հիման վրա
2. Միայն վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա
3. Անձի (անձանց) դիմումի և վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա
4. **Անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա**

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 2) – 4

Հարց 19

Վարչական վարույթում կարող են հանդես գալ նաև այլ անձինք՝

1. Վկաներ
2. Փորձագետներ
3. Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ
4. **Ճիշտ են բոլոր պատասխանները**

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 22) – 4

Հարց 20

Վկան, փորձագետը, թարգմանիչը և այլ մարմինների ներկայացուցիչները վարչական վարույթում կարող են հանդես գալ

1. **Միայն անմիջականորեն**
2. Միջնորդի միջոցով
3. Լիազորված անձի միջոցով
4. Ներկայացուցչի միջոցով

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 23, մաս 5) – 1

Հարց 21

Վարչական մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա՝

1. Վարույթի մասնակից է
2. Վարույթի մասնակիցներից որևէ մեկի կամ նրա ներկայացուցչի ազգականն է
3. Աշխատում է վարույթի մասնակիցներից որևէ մեկի մոտ
4. **Ճիշտ են բոլոր պատասխանները**

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 24) – 4

Հարց 22

Վարչական մարմնի ղեկավարին հայտնված բացարկի վերաբերյալ որոշումն ո՞վ է ընդունում

1. **Ղեկավարն ինքը**

2. Վարույթի մասնակիցներից որևէ մեկը

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 25, մաս 4) – 1

Հարց 23

Վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձի ինքնաբացարկը

1. Հայտնվում է գրավոր, դա պետք է պատճառաբանված լինի, ինքնաբացարկի պատճենը պատշաճ ձևով ուղարկվում է վարույթի մասնակիցներին՝ ի գիտություն

2. Հայտնվում է բանավոր, դա պետք է պատճառաբանված լինի, ինքնաբացարկի պատճենը պատշաճ ձևով ուղարկվում է վարույթի մասնակիցներին՝ ի գիտություն

3. Հայտնվում է բանավոր, դա կարող է պատճառաբանված լինել: Անհրաժեշտության դեպքում ինքնաբացարկի պատճենը ուղարկվում է վարույթի մասնակիցներին՝ ի գիտություն

4. Հայտնվում է գրավոր, դա կարող է պատճառաբանված լինել: Անհրաժեշտության դեպքում ինքնաբացարկի պատճենը ուղարկվում է վարույթի մասնակիցներին՝ ի գիտություն

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 2) – 1

Հարց 24

Վարչական վարույթն իրականացվում, և վարչական ակտն ընդունվում է

1. Հայերենով

2. Գրական հայերենով

3. Հայերենով և ռուսերենով

4. Հայերենով և անգլերենով

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 27, մաս 1) – 1

Հարց 25

Վարչական վարույթի իրականացման ընթացքում թույլատրվում է վարույթի մասնակիցների կողմից օտար լեզուների օգտագործումը

1. Այո, սակայն այդ անձինք պարտավոր են իրենց ներկայացրած թարգմանչի միջոցով ապահովել հայերեն թարգմանություն, եթե վարչական մարմինն այդպիսի թարգմանություն ապահովելու հնարավորություն չունի

2. Այո, սակայն վարչական մարմինը պարտավոր է ապահովել հայերեն թարգմանություն

3. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 27) – 1

Հարց 26

Արդյո՞ք բանավոր և այլ ձևի վարչական ակտեր ընդունելու վերաբերյալ գործավարություն և հաշվառում է իրականացվում

1. Այո

2. Ոչ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ

3. Ոչ

Հարց 27

Դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո քանի՞ օրվա ընթացքում է վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցվում վարչական վարույթի հարուցման մասին

1. Երեք աշխատանքային օրվա ընթացքում

2. Եռօրյա ժամկետում

3. Չորս աշխատանքային օրվա ընթացքում

4. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 29.1, մաս 1) – 2

Հարց 28

Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են

1. Անձի դիմումը, բողոքը կամ վարչական մարմնի նախաձեռնությունը

2. Միայն անձի դիմումը

3. Միայն անձի բողոքը

4. Միայն վարչական մարմնի նախաձեռնությունը

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 30, մաս 1, «ա» կետ) – 1

Հարց 29

Իրավաբանական անձի կողմից վարչական մարմին ներկայացված դիմումը պե՞տք է պարունակի նրա լրիվ անվանումը, նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 1, «ա» կետ) – 1

Հարց 30

Եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա

1. Դիմումն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին

2. Դիմումն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին

3. Դիմումն ստացած վարչական մարմինը հինգօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին

4. Դիմումն ստացած վարչական մարմինը հինգօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 33, մաս 1) – 2

Հարց 31

Եթե դիմումում ներկայացված հարցերից մեկը կամ մի քանիսը ենթակա են վարչական այլ մարմնի իրավասությանը, ապա վարչական մարմինը

1. Դիմումն այդ մասով վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին

2. Դիմումն այդ մասով վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին

3. Դիմումը վերադարձնում է դիմողին

4. Եռօրյա ժամկետում դիմումը վերադարձնում է դիմողին

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 33, մաս 2) – 2

Հարց 32

Եթե դիմումով առաջադրված պահանջը չի մտնում ինչպես դա ստացած վարչական մարմնի, այնպես էլ որևէ այլ վարչական մարմնի իրավասության մեջ, ապա վարչական մարմինը

1. Դիմումը և դրան կից փաստաթղթերը վերադարձնում է դիմողին՝ նշելով պատճառների մասին

2. Դիմումը և դրան կից փաստաթղթերը, դրանք ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վերադարձնում է դիմողին

3. Դիմումը և դրան կից փաստաթղթերը, դրանք ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վերադարձնում է դիմողին՝ նշելով պատճառների մասին

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 33, մաս 3) – 3

Հարց 33

Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքեր են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 34) – 1

Հարց 34

Ի՞նչ ժամկետում պետք է իրականացվի վարչական վարույթը

1. **Հնարավորինս սեղմ ժամկետում**

2. 25-օրյա ժամկետում

3. Անհապաղ

4. 15-օրյա ժամկետում

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 36, մաս 1) – 1

Հարց 35

Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, բացառությամբ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 37, մաս 1) – 2

Հարց 36

Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում լուծման կարող է չանցկացնել, եթե՝

1. Վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուծման անցկացվեն

2. Դիմումն ակնհայտ անհիմն է

3. Ընդունվում է բանավոր վարչական ակտ

4. Ճիշտ են բոլոր պատասխանները

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 38, մաս 2) – 4

Հարց 37

Լուծման չեն անցկացվում, եթե անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը

1. Կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման

2. Կարող է հանգեցնել դիմողի դժգոհության

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 38, մաս 3, «ա» կետ) – 1

Հարց 38

Վարչական մարմինը ֆիզիկական անձանց դիմումով առաջադրվող հարցի կապակցությամբ տվյալ վարչական վարույթի հետ կապված նրանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ

1. Պարտավոր է պարզաբանումներ տալ

2. Պարտավոր չէ պարզաբանումներ տալ

3. Պարտավոր է բացատրություններ տալ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 40, մաս 1) – 1

Հարց 39

Վարչական մարմինն իրավունք ունի պահանջել ներկայացնելու այնպիսի փաստաթղթեր կամ դրանց նույնպիսի կամ այլ կարգով վավերացված պատճեններ, որոնց ներկայացնելը կամ համապատասխան վավերացմամբ ներկայացնելը նախատեսված չէ օրենքով

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 42, մաս 2) – 2

Հարց 40

Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է

1. անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում

2. վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում

3. Բոլոր պատասխանները ճիշտ են

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 43, մաս 1) – 3

Հարց 41

Վարչական վարույթի առավելագույն ժամկետը

1. 10 աշխատանքային օր է

2. 30 օր է, օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ

3. 20 օր է, օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 20 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ

4. 20 աշխատանքային օր է

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 46) – 2

Հարց 42

Եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը

1. Համարվում է չընդունված

2. Համարվում է կասեցված

3. Համարվում է ընդունված

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 48, մաս 1) – 3

Հարց 43

Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե

1. Անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը

2. Անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը

3. Անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև վարչական կամ քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը

4. Անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 49, մաս 1, «ա» կետը) – 2

Հարց 44

Վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը, եթե ընդունվելիք վարչական ակտի հասցեատեր իրավաբանական անձը վերակազմակերպվում է

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 49, մաս 2, «բ» կետ) – 1

Հարց 45

Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե

1. դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, և վարչական մարմինը, միջոցներ ձեռնարկելով դիմողին բացահայտելու ուղղությամբ, չի կարողացել պարզել, թե ով է հայցում համապատասխան վարչական ակտի ընդունումը

2. դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից

3. գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ

4. Նշված բոլոր տարբերակները ճիշտ են

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 50, մաս 1) – 4

Հարց 46

Վարչական մարմինը վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա պարտավոր է որոշում ընդունել բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, եթե

1. Ի հայտ են եկել տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող այնպիսի նոր հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձանց

2. Ի հայտ են եկել տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող այնպիսի նոր հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձանց, կամ թեև հայտնի են եղել նրանց, սակայն այդ անձանցից անկախ հանգամանքներով չեն ներկայացվել վարչական ակտն ընդունող վարչական մարմին

3. Ի հայտ են եկել տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող այնպիսի նոր հանգամանքներ, որոնք այդ անձանցից անկախ հանգամանքներով չեն ներկայացվել վարչական ակտն ընդունող վարչական մարմին

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 51, մաս 1, «գ» կետ) – 2

Հարց 47

Վարչական մարմինը վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա պարտավոր է որոշում ընդունել բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, եթե

1. Առկա են նոր ապացույցներ, որոնք կարող են հանգեցնել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձի համար ավելի բարենպաստ որոշում ընդունելուն

2. Առկա են նոր ապացույցներ, որոնք կարող են հանգեցնել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձի համար ավելի անբարենպաստ որոշում ընդունելուն

3. Առկա են նոր ապացույցներ, որոնք կարող են հանգեցնել երրորդ անձանց համար համար ավելի անբարենպաստ որոշում ընդունելուն

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 51, մաս 1, «բ» կետ) – 1

Հարց 48

Ի՞նչ ժամկետում պետք է ներկայացվի վարույթը վերսկսելու հարցով դիմումը

1. 6 ամսվա ընթացքում այն օրից, երբ վարույթը վերսկսելու հարցով դիմած անձն իմացել է վարչական վարույթը վերսկսելու հիմք դարձած հանգամանքի (հանգամանքների) մասին

2. 3 ամսվա ընթացքում այն օրից, երբ վարույթը վերսկսելու հարցով դիմած անձն իմացել է վարչական վարույթը վերսկսելու հիմք դարձած հանգամանքի (հանգամանքներ) մասին

3. 1 ամսվա ընթացքում այն օրից, երբ վարույթը վերսկսելու հարցով դիմած անձն իմացել է վարչական վարույթը վերսկսելու հիմք դարձած հանգամանքի (հանգամանքներ) մասին

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 51, մաս 2) – 2

Հարց 49

Նշվածներից ո՞րն է համարվում բարենպաստ վարչական ակտ՝

1. Որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման

2. Որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը

3. Որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 53, մաս 2, «ա» կետ) – 1

Հարց 50

Նշվածներից ո՞րն է համարվում միջամտող վարչական ակտ

1. Որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման

2. Որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը

3. Որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 53, մաս 2, «բ» կետ) – 2

Հարց 51

Նշվածներից ո՞րն է համարվում գուգորդվող վարչական ակտ՝

1. Որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման

2. Որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը

3. Որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 53, մաս 2, «գ» կետ) – 3

Հարց 52

Գրավոր դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում կարո՞ղ է ընդունվել բանավոր վարչական ակտ

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 54, մաս 1) – 2

Հարց 53

Վարչական ակտը կարո՞ղ է ունենալ ներդիրներ, հավելվածներ կամ լրացուցիչ այլ փաստաթղթեր

1. Այո

2. Ոչ

3. Այո, եթե դրանց գործողությունը չի գերազանցում վարչական ակտի գործողության ժամկետը

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 55, մաս 3) – 3

Հարց 54

Վարչական ակտը պետք է պարունակի

1. Վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը

2. Վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը

3. Վարչական ակտի հասցեատիրոջ՝ իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 55, մաս 4, «բ» կետ) – 3

Հարց 55

Միանման հարց կարգավորող վարչական ակտը կարո՞ղ է ունենալ միասնական նմուշի ձև (ձևաթուղթ)

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 55, մաս 5) – 1

Հարց 56

Գրավոր վարչական ակտն ընդունված է համարվում

1. Ակտը կազմվելու օրվանից

2. Ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու օրվանից

3. Ակտը հրապարակվելու պահից

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 58, մաս 1) – 2

Հարց 57

Բանավոր և այլ ձևի վարչական ակտերն ընդունված են համարվում

1. Ակտը հրապարակվելու պահից

2. Ակտի մասին հասցեատիրոջը հայտնելու պահից

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 58, մաս 2) – 1

Հարց 58

Գրավոր վարչական ակտը պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին

1. Ընդունումից հետո՝ անհապաղ

2. Ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում

3. Ընդունումից հետո՝ եռամսյա ժամկետում

4. Ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 59, մաս 2) – 2

Հարց 59

Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում

1. Ակտի ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից

2. Ակտի ընդունման մասին սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ

3. Ակտի ընդունման մասին սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 60, մաս 1) – 3

Հարց 60

Գրավոր վարչական ակտը կարող է գործել անորոշ կամ որոշակի ժամկետով

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 61, մաս 1) – 1

Հարց 61

Ո՞ր վարչական ակտն է առ ոչինչ

1. Որից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել

2. Ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը

3. Ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք

4. Բոլոր տարբերակները ճիշտ են

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 62, մաս 1) – 4

Հարց 62

Առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից

1. Իրավաբանական ուժ ունի և ենթակա է կիրառման

2. Իրավաբանական ուժ ունի և ենթակա է կիրառման, քանի դեռ ուժը կորցրած չի ճանաչվել

3. Իրավաբանական ուժ ունի, սակայն ենթակա չէ կիրառման

4. Իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 62, մաս 2) – 4

Հարց 63

Օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով ընդունված վարչական ակտը

1. Առ ոչինչ է

2. Անվավեր է

3. Իրավաչափ է

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 63, մաս 1, «ա» կետ) – 2

Հարց 64

Բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, եթե

1. Ուժը կորցրած ճանաչելը թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ

2. Օրենքի փոփոխության պատճառով վերանում է տվյալ վարչական ակտի անհրաժեշտությունը, կամ դադարում է այդ ակտի գործողությունը

3. Վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարել այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ պատշաճ չի կատարել

4. Նշված բոլոր պատասխանները ճիշտ են

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 66, մաս 3) – 4

Հարց 65

Վարչական բողոքը կարող է բերվել

1. Վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում

2. Վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում

3. Վարչական մարմնի կողմից անգործություն ցուցաբերելու օրվանից 2 ամսվա ընթացքում

4. Ճիշտ են բոլոր պատասխանները

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 71, մաս 1) – 4

Հարց 66

Վարչական ակտի հարկադիր կատարումն կարո՞ղ է իրականացնել այդ ակտն ընդունած վարչական մարմինը

1. Այո

2. Ոչ

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 80) – 1

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍՊԻՐՔ

Հարց 1

Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիներին հաշվառման վերցնելու, հաշվառումից հանելու և քաղաքացիներին բնակելի տարածություն հատկացնելու կարգը պաշտոնատար անձանց կողմից խախտելն առաջացնում է տուգանքի նշանակում

1. Սահմանված աշխատավարձի քսանապատիկի չափով

2. Սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով

3. Սահմանված աշխատավարձի տասնապատիկի չափով

4. Սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով

(ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, հոդված 151) –4

Հարց 2

Բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից ընդհանուր բաժնային սեփականության պահպանման՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված պարտադիր նորմերի պահանջները սահմանված կարգով կամ ժամկետներում առաջին անգամ չկատարելը պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ ի՞նչ է առաջացնում

1. Նախազգուշացում

2. Նկատողություն

3. Տուգանքի նշանակում

4. Պաշտոնատար անձին պաշտոնից ազատում

(ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, հոդված 152) -1

Հարց 3

Բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից ընդհանուր բաժնային սեփականության պահպանման՝ Կառավարության կողմից սահմանված պարտադիր նորմերի պահանջները նախազգուշացումից հետո պետական լիազոր մարմնի սահմանած կարգով և ժամկետներում չկատարելը ֆիզիկական անձ կառավարման մարմնի կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ ի՞նչ է առաջացնում

1. Տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով

2. Տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով

3. Տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով

(ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, հոդված 152) -1

Հարց 4

Համայնքի ղեկավարի կամ նրա նշանակած պատասխանատու պաշտոնատար անձի կողմից սահմանված կարգով կամ դեպքերում բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի գործառույթները չիրականացնելը կամ ոչ պատշաճ իրականացնելը կամ օրենքով սահմանված տեղեկանքները սահմանված կարգով կամ ժամկետներում չենքի սեփականատերերին չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում

1. Նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով

2. Սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով

3. Սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով

4. Սահմանված աշխատավարձի եռապատիկի չափով

(ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, հոդված 152.1) -2

Հարց 5

Նոր ստեղծված կամ օրենքով սահմանված կարգով լիազորությունները դադարած բազմաբնակարան շենքի կառավարման մարմինների կողմից այդ մասին սահմանված ժամկետներում չենքի սեփականատերերին կամ համայնքի ղեկավարին չծանուցելը ֆիզիկական անձ կառավարման մարմնի կամ իրավաբանական անձ կառավարման

մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում

1. Սահմանված նվազագույն աշխատավարձի չափով
2. **Սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով**
3. Սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով
(ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, հոդված 152.1) -2

Հարց 6

Նոր ստեղծված կամ օրենքով սահմանված կարգով լիազորությունները դադարած բազմաբնակարան շենքի կառավարման մարմինների կողմից այդ մասին սահմանված ժամկետներում շենքի սեփականատերերին կամ համայնքի ղեկավարին չձանուցելը առաջացնում է տուգանքի նշանակում

1. Ֆիզիկական անձ կառավարման մարմնի կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ

1. Կառավարման մարմնի հաշվապահի նկատմամբ
3. Համայնքի պաշտոնատար անձի նկատմամբ

(ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, հոդված 152.1) -1

Հարց 7

Բազմաբնակարան շենքի կառավարման մարմինների կողմից բազմաբնակարան շենքի համար օրենքով սահմանված պարտադիր վճարները և այլ վճարներն անկանխիկ եղանակով կատարելու նպատակով առանձին բանկային հաշիվ չբացելը ֆիզիկական անձ կառավարման մարմնի կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում

1. Նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով

2. Քսան հազար դրամի չափով
3. Նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով

(ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, հոդված 152.1) -1

Հարց 8

Շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելը առաջացնում է տուգանքի նշանակում

1. Սահմանված աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով
2. Սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով
3. **Սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով**

4. Սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով

(ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, հոդված 152.2) -3

Հարց 9

Բնակելի տարածություն կամ ժամանակավոր կացարան ինքնական զբաղեցնելը առաջացնում է

1. տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով

2. Նախազգուշացում
3. Տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով
4. Նկատողություն

(ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, հոդված 153) -1

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հարց 1

Ի՞նչ են իրավահաստատող փաստաթղթերը

1. Իրավունքի մասին հուշող փաստաթղթեր
2. Գույքագրման արձանագրություններ
3. **Իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր և գույքագրման փաստաթղթեր**

4. Միայն սեփականության վկայականները

(«Գույքի նկատմամբ իրավունքների պեղական գրանցման մասին» օրենք, հոդված 2) – 3

Հարց 2

Որո՞նք են պետական գրանցման սուբյեկտներ

1. Հայաստանի Հանրապետությունը
2. Հայաստանի Հանրապետության համայնքները
3. Ֆիզիկական և իրավաբանական անձինք
4. **Բոլոր պատասխանները ճիշտ են**

Հարց 3

Արդյո՞ք պետական գրանցման ավելի վաղ ներկայացված գույքի նկատմամբ իրավունքներն ունեն առաջնահերթություն ավելի ուշ ներկայացված իրավունքների նկատմամբ

1. Այո
2. Ոչ

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 7, մաս 1) – 1

Հարց 4

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք են հանդիսանում

1. Տվյալ գույքի հասցեով առկա անձնագրային հաշվառումները
2. **Իրավահաստատող փաստաթղթերը**
3. Տվյալ հասցեում մեկ տարի և ավել բնակության հանգամանքը
4. Տվյալ գույքը 5 և ավելի տարի շահագործելը

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 8, մաս 1) – 2

Հարց 5

Սահմանափակումների պետական գրանցման համար հիմքերից են

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները
2. Սեփականատիրոջ դիմումը
3. **Դատական ակտերը, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, նախաքննություն իրականացնող մարմինների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմինների կայացված որոշումները**

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 10, մաս 1, կետ 1) – 3

Հարց 6

Պետական գրանցման արդյունքում ստեղծվող հիմնական փաստաթղթերից են

1. Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանը
2. Կադաստրային քարտեզը (հատակագիծը).
3. Անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար կազմված կադաստրային գործը
4. **Նշված բոլոր փաստաթղթերը**

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 12, մաս 1) – 4

Հարց 7

Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցումը, պետական գրանցման դադարեցումը, կասեցումը և մերժումը գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրումն իրականացնում է

1. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը
2. Պետական եկամուտների կոմիտեն

3. Կադաստրի կոմիտեն

4. Համայնքը

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 19, մաս 1) – 3

Հարց 8

Ի՞նչն է հիմք հանդիսանում կառուցապատողի կողմից քաղաքաշինական գործունեության իրականացման արդյունքում նոր ստեղծվող անշարժ գույքի նկատմամբ կառուցապատողի իրավունքների պետական գրանցման համար

1. **ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված տվյալ շինության ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը և շինարարության թույլտվությունը**

2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված տվյալ շինության ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը

3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված շինարարության թույլտվությունը

4. Տվյալ շինության քաղաքաշինական փաստաթղթերը և շինարարության թույլտվությունը

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 36, մաս 1) – 1

Հարց 9

Ի՞նչն է գրանցվում կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի հիման վրա առանձնացված միավորի նկատմամբ իրավատիրոջ գնման իրավունքը գրանցելիս

1. Ապագայում ձեռք բերվող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի մակերեսի չափը՝ ըստ շինության նախագծի

2. Ապագայում ձեռք բերվող բնակարանի նախագծային համարը և մակերեսի չափը՝ ըստ շինության նախագծի

3. Ապագայում ձեռք բերվող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի համարը և մակերեսի չափը՝ ըստ նախագծի

4. **Ապագայում ձեռք բերվող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի նախագծային համարը և մակերեսի չափը՝ ըստ շինության նախագծի**

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 36, մաս 4) – 4

Հարց 10

Ինչպե՞ս է հաստատվում ավարտված շինության արտաքին չափերի ու հարկայնության համապատասխանությունը ճարտարապետահատակագծային առաջադրանքով և հաստատված նախագծով սահմանված պահանջներին կամ դրանցից շեղումների թույլատրելի լինելը

1. Համայնքի ղեկավարի կողմից հաստատած ձևաթղթով շինարարության ավարտի փաստագրման լիազորություն ունեցող մարմնի տված՝ շինարարության ավարտի ակտով

2. ՀՀ կառավարության հաստատած ձևաթղթով շինարարության ավարտի փաստագրման լիազորություն ունեցող մարմնի տված՝ շինարարության ավարտի ակտով

3. Շինարարության ավարտի փաստագրման լիազորություն ունեցող մարմնի տված՝ շինարարության ավարտի ակտով

4. Համայնքի ղեկավարի կողմից տրված՝ շինարարության ավարտի ակտով

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 37, մաս 2) – 2

Հարց 11

Ո՞վ է սահմանում ճարտարապետահատակագծային առաջադրանքը, շինարարության թույլտվությունները, շինության նախագծերը, շինարարության ավարտի ակտերը և շինության շահագործման թույլտվությունները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Կադաստրի կոմիտե էլեկտրոնային եղանակով ներկայացման կարգը

1. Համայնքի ղեկավարը

2. ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարը

3. ՀՀ կառավարությունը

4. Տեղական ինքնակառավարման մարմինները

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 37.1, մաս 1) – 3

Հարց 12

Ու՞մ դիմումի հիման վրա է իրականացվում բազմաբնակարան շենքերի սեփականատերերի ընդհանուր գույքի նկատմամբ սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի պետական գրանցումը

1. Բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի

2. Համայնքի ղեկավարի

3. Շենքի բոլոր շինությունների սեփականատերերի

4. Շենքի ցանկացած շինության սեփականատիրոջ

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 42, մաս 1) – 1

Հարց 13

Բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր գույքի նկատմամբ շենքի սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը գրանցելիս գրանցման մատյանում և գրանցման վկայականում սեփականության իրավունքի սուբյեկտի անվանման համար նախատեսված դաշտում լրացվում է՝

1. Տվյալ բազմաբնակարան շենքի հասցեն

2. Բազմաբնակարան շենքի հասցեն և «Բազմաբնակարան շենքի սեփականատերեր» արտահայտությունը

3. Բազմաբնակարան շենքի սեփականատերեր» արտահայտությունը

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 42, մաս 2) – 2

Հարց 14

Օրենքով սահմանված կարգով բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր գույքից որևէ մասի առանձնացման դեպքում առանձնացվող մասի նկատմամբ իրավունքի պետական գրանցման դիմումին պետք է կցվի

1. անշարժ գույքի մասն առանձնացնելու վերաբերյալ բազմաբնակարան շենքի սեփականատերերի ժողովի կողմից օրենքով սահմանված կարգով ընդունված և ձևակերպված որոշումը

2. ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մասն առանձնացնելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ընդունված և ձևակերպված որոշումը

3. ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մասն առանձնացնելու վերաբերյալ բազմաբնակարան շենքի սեփականատերերի ժողովի կողմից օրենքով սահմանված կարգով ընդունված և ձևակերպված որոշումը

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 42, մաս 3) – 3

Հարց 15

Եթե ամուսնության ընթացքում ձեռք բերված և ամուսինների համատեղ սեփականությունը դիտարկվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման համար ներկայացված իրավահաստատող փաստաթղթերում որպես իրավատեր նշված է միայն ամուսիններից մեկը, ապա ամուսինների համատեղ դիմումի հիման վրա այդ գույքի նկատմամբ կարո՞ղ է գրանցվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը

1. Ոչ

2. Այո

(«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենք, հոդված 43, մաս 1.1) – 2

**«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ**

Հարց 1

Ինչպե՞ս է իրականացվում ՀՀ տարածքից դուրս հայ ժողովրդի պատմամշակութային հուշարձանների պահպանությունը

1. ՀՀ օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում

2. Այդ երկրի օրենսդրության և պայմանագրերի համաձայն

3. **Այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում**

4. ՀՀ օրենսդրությամբ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 4) – 3

Հարց 2

ՀՀ կառավարությունը հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի սուբյեկտ է

1. **Այո**

2. **Ոչ**

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 5) – 1

Հարց 3

Հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են

1. Հանրապետական նշանակության
2. Տեղական նշանակության
3. Տարածաշրջանային նշանակության
4. **Հանրապետական և տեղական նշանակության**

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 6) – 4

Հարց 4

Ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների բարձրարժեք, հնագույն, տիպական կամ հազվագյուտ նմուշները դասվում են

1. **Հանրապետական նշանակության կարգին**
2. Տեղական նշանակության կարգին
3. Տարածաշրջանային նշանակության կարգին

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 6) – 1

Հարց 5

Հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները բնութագրող հուշարձանները դասվում են

1. Հանրապետական նշանակության կարգին
2. **Տեղական նշանակության կարգին**
3. Տարածաշրջանային նշանակության կարգին

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 6) – 2

Հարց 6

Հուշարձանների դասակարգումը կատարում է՝

1. **Հուշարձանների պահպանության բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա**
2. Հուշարձանների պահպանության բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը
3. Հուշարձանների պահպանության բնագավառում գործող փորձագիտական հանձնաժողովը

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 6) – 1

Հարց 7

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականությունը

1. Արգելվում է

2. Չի արգելվում

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 7) – 1

Հարց 8

Ո՞վ է սահմանված կարգով կազմում բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծը

1. ՀՀ կառավարությունը

2. **Տեղական ինքնակառավարման մարմինները**

3. Համայնքի ղեկավարը

4. ՀՀ վարչապետը

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 11) – 2

Հարց 9

Ովքե՞ր են հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների պատվիրատուները

1. Տեղական ինքնակառավարման մարմինները

2. Հուշարձանների սեփականատերերը

3. Համայնքների ղեկավարները

4. **Հուշարձանների սեփականատերերը և օգտագործողները**

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 31) – 4

Հարց 10

Ո՞վ է պարտավոր կատարել հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքներ

1. **Հուշարձանի սեփականատերը**

2. Հուշարձանների պահպանության բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը

3. Քաղաքաշինության կոմիտեն

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք հոդված 36) – 1

«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հարց 1

Ինչպե՞ս է իրականացվում տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը

1. Կառավարության սահմանած կարգով

2. Տեղեկատվությունը տնօրինողի սահմանած կարգով
3. Արդարադատության նախարարության սահմանած կարգով

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 5) – 1

Հարց 2

Ո՞վ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը

1. Յուրաքանչյուր քաղաքացի
2. Յուրաքանչյուր 18 տարին լրացած քաղաքացի

3. Յուրաքանչյուր անձ

4. Յուրաքանչյուր ոք

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 1) – 3

Հարց 3

Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել

1. Օրենքով և կառավարության որոշումներով սահմանված դեպքերում
2. Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում
3. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում
4. Ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերում

Հարց 4

Տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է տեղեկություն տրամադրելու կարգը փակցնել իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում

1. Այո

2. Ոչ

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 1) – 1

Հարց 5

Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա

1. Տեղեկություն չի տրամադրվում

2. **Տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ**

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 2) – 2

Հարց 6

Տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

1. Պարունակում է պետական, բանկային, առևտրային գաղտնիք կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն

2. **Ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը**

3. Խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը

4. Խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 8, 3-րդ մաս, կետ 2) – 2

Հարց 7

Տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա

1. Վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին

2. **Ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը**

3. Պարունակում է պետական, բանկային, առևտրային գաղտնիք կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն

4. Չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա ՀՀ սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1, կետ 1) – 3

Հարց 8

Դիմողը պարտավոր է հիմնավորել հարցումը

1. Այո

2. Ոչ

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 4) – 2

Հարց 9

Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին ի՞նչ ժամկետում է տրամադրվում՝

1. Անմիջապես

2. 10-օրյա ժամկետում

3. Մեկամսյա ժամկետում

4. 5-օրյա ժամկետում

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 7, կետ 1) – 4

Հարց 10

Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում

1. Դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում

2. Դիմումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում

3. Դիմումը ստանալուց հետո՝ 20-օրյա ժամկետում

4. Դիմումին պատասխանելու համար սահմանված 15-օրյա ժամկետն ավերտվելուց հետո 30-օրյա ժամկետում

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 7, կետ 3) – 1

Հարց 11

Գրավոր հարցման պատասխանն ի՞նչ եղանակով կարող է տրվել

1. Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում

2. Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում

3. Նշված երկու տարբերակն էլ ճիշտ են

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 7) – 3

Հարց 12

Տեղեկության տրամադրման համար գանձում է կատարվում հետևյալ դեպքերում

1. Բանավոր հարցումներին պատասխանելիս
2. Մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս
3. **10 էջից ավել տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս**
4. Տեղեկությունն էլեկտրոնային փոստով տրամադրելիս

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 2, կետ 2) – 3

Հարց 13

Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին գրավոր հայտնում է դիմողին՝

1. 3-օրյա ժամկետում
2. Անհապաղ
3. Մեկամսյա ժամկետում

4. 5-օրյա ժամկետում

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 3) – 4

Հարց 14

Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան

1. Այո
2. Ոչ

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 4) – 1

Հարց 15

Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1. Տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն

2. Տեղեկություններ փնտրող անձին տրամադրել միայն բանավոր տեղեկատվություն
3. Տեղեկություններ փնտրող անձին տրամադրել միայն գրավոր տեղեկատվություն
4. Իր տնօրինության տակ գտնվող մասնակի տեղեկություն

(«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 12) – 1

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հարց 1

Կարո՞ղ է սեփականատերը իր գույքը հանձնել այլ անձի հավատարմագրային կառավարման

- 1. Այո**
- 2. Ոչ**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 163, մաս 3) - 1

Հարց 2

Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման՝

- 1.Այո**
- 2.Ոչ**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 163, մաս 3) - 2

Հարց 3

Ո՞վ է կրում գույքի պահպանման հոգսը

- 1. Վարձակալը**
- 2. Գույքը տիրապետողը**
- 3. Սեփականատերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով**
- 4. Օգտագործողը**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 164) -3

Հարց 4

Ինչպիսի՞ գույք կարող է գտնվել քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության ներքո

1. Ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց

2. Ցանկացած անշարժ և շարժական գույք

3. Անշարժ և շարժական գույքերի որոշակի տեսակներ

4. Ցանկացած գույք՝ բացառությամբ անշարժ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 167, մաս 1) -1

Հարց 5

Կարո՞ղ են արդյոք սեփականատերեր չհամարվող անձինք ունենալ հողամասի կառուցապատման իրավունք

1. Ոչ

2. Այո

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 170, մաս 1, կետ 1) -2

Հարց 6

Բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անցումն այլ անձի արդյո՞ք հիմք է այդ գույքի նկատմամբ սեփականատեր չհամարվող անձանց գույքային իրավունքների դադարման համար

1. Այո

2. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 170, մաս 2) -2

Հարց 7

Սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ այլ անձն ինչպե՞ս կարող է ձեռք բերել սեփականության իրավունք

1. Համայնքի ավագանու որոշման հիման վրա

2. Գույքի առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա

3. Կտակի կամ ժառանգության վկայագրի հիման վրա

4. Օրենքով սահմանված կարգով

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 172, մաս 2) -2

Հարց 8

Քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքն ինչպե՞ս է անցնում այլ անձանց

1. Միայն կտակի հիման վրա

2. Պայմանագրով սահմանված կարգով

3. Ժառանգաբար՝ կտակին կամ օրենքին համապատասխան

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 172, մաս 3) - 3

Հարց 9

Ե՞րբ է ծագում նոր ստեղծված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը

1. Անշարժ գույքի ստեղծումից մեկ տարի հետո
2. **Դրա պետական գրանցման պահից**
3. Սեփականության իրավունքը գրանցելուց վեց ամիս հետո
4. Անշարժ գույքի ստեղծումից ոչ ուշ քան վեց ամիս հետո

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 173) – 2

Հարց 10

Ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքը ձեռք բերած անձի մոտ ե՞րբ է ծագում սեփականության իրավունքը

1. **Դրա պետական գրանցման պահից**
2. Պայմանագրով սահմանված կարգով
3. Նոտարական կարգով վավերացվելուց հետո
4. Նվիրատվության պայմանագրի հիման վրա

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 187, մաս 4) – 1

Հարց 11

Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքեր, շինություններ կամ այլ կառույցներ համարվում է

1. Ապօրինի շինություն
2. **Ինքնակամ կառույց**
3. Օրենքի նորմերին չհամապատասխանող կառույց
4. Քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող շինություն

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 188, մաս 1) – 2

Հարց 12

Առանց դատարան դիմելու ո՞վ իրավունք ունի քանդելու սեփականատեր ունեցող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը

1. Համայնքը
2. Իրավասու մարմինները
3. **Հողամասի սեփականատերը**
4. Օրենքով լիազորված անձիք

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 188, մաս 3) – 3

Հարց 13

Ո՞րն է գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքը

1. Գույքի նկատմամբ մեկից ավելի ֆիզիկական անձանց սեփականության
2. Գույքի նկատմամբ ֆիզիկական և իրավաբանական անձի սեփականության իրավունքը
3. Գույքի նկատմամբ մեկից ավելի իրավաբանական անձանց սեփականության իրավունքը

4. Գույքի նկատմամբ երկու կամ ավելի անձանց սեփականության իրավունքը

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 189, մաս 1) -4

Հարց 14

Կարո՞ղ է արդյոք բաժնային սեփականության մասնակիցը, որն ընդհանուր գույքի օգտագործման սահմանված կարգի պահպանմամբ իր հաշվին իրականացրել է այդ գույքից անբաժանելի բարելավումներ, պահանջել դրանց համապատասխան մեծացնելու ընդհանուր սեփականության իրավունքում իր բաժինը

1. Ոչ
2. Այո

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 190, մաս 3) -2

Հարց 15

Ինչպե՞ս է սահմանվում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի տիրապետման և օգտագործման հետ կապված առանձնահատկությունները

1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքով
3. Միջազգային պայմանագրերով
4. Օրենքներով և իրավական ակտերով

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 191, մաս 3) -1

Հարց 16

Կարո՞ղ է արդյոք բաժնային սեփականության մասնակիցն իր բաժինը վաճառել, նվիրել, կտակել, գրավ դնել կամ այլ կերպ տնօրինել՝ պահպանելով օրենքով սահմանված կանոնները

1. Այո
2. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 192, մաս 2) -1

Հարց 17

Ինչպե՞ս կարող է բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանվել դրա մասնակիցների միջև

1. Նրանց համաձայնությամբ
2. Համայնքի ղեկավարի որոշմամբ
3. Պայմանագրով սահմանված կարգով

Հարց 18

Կարո՞ղ է արդյոք որևէ անձ առանց օրենքով սահմանված հիմքերի կամ օրինական տիրապետողի թույլտվության մուտք գործելու հողամաս, շենք, շինություն և այլ անշարժ գույքի տարածք կամ այդ տարածքում առանց օրինական տիրապետողի թույլտվության տեղադրելու որևէ շարժական գույք

1. Այո
2. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 203, մաս 2) -2

Հարց 19

Ո՞վ ունի իրավունք ազատորեն՝ առանց որևէ թույլտվության, գտնվելու պետության կամ համայնքի սեփականություն հանդիսացող՝ բոլորի համար բաց հողամասերում և օգտվելու դրանցում եղած բնական օբյեկտներից՝ պահպանելով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերը

1. Յուրաքանչյուր քաղաքացի
2. Յուրաքանչյուր անձ
3. 18 տարին լրացած անձը
4. **Յուրաքանչյուր ոք**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 203, մաս 5)-4

Հարց 20

Կարո՞ղ է արդյոք կառուցապատման իրավունքը փոխանցվել այլ անձի իրավահաջորդության կարգով

1. Այո
2. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 204.1, մաս 2)-1

Հարց 21

Կարո՞ղ է արդյոք սեփականատերն իրեն պատկանող հողամասը տրամադրել վարձակալության

1. Ոչ
2. **Այո**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 205, մաս 1) -2

Հարց 22

Ինչպե՞ս է պետության կամ համայնքի սեփականության ներքո գտնվող հողամասի օգտագործման իրավունքը տրվում քաղաքացիներին և իրավաբանական անձանց

1. Հողամասերն օգտագործման տրամադրելու լիազորություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշման հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով

2. Համայնքի ավագանու որոշման հիման վրա

3. Հողամասերն օգտագործման տրամադրելու լիազորություն ունեցող պետական մարմնի որոշման հիման վրա

4. Տեղական ինքնակառավարման մարմնի որոշման հիման վրա

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 205, մաս 2) -1

Հարց 23

Իրավունք ունի՞ արդյոք այլ անձի պատկանող հողամասում գտնվող անշարժ գույքի սեփականատերն օգտագործել այդ հողամասի այն մասը, որում ամրակայված է անշարժ գույքը

1. Այո

3. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 207, մաս 1) -1

Հարց 24

Ի՞նչ է բազմաբնակարան շենքը

1. Որում մի քանի սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանում է բնակարան և (կամ) ոչ բնակելի տարածք, և որի կառուցման ու սպասարկման համար հատկացված հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը կարող է առանձնացվել բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների սեփականատերերի միջև

2. Որում մեկից ավելի սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանում է բնակարան և (կամ) ոչ բնակելի տարածք, և որի կառուցման ու սպասարկման համար հատկացված հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը չի կարող առանձնացվել բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների սեփականատերերի միջև

3. Որում մեկից ավելի սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանում է բնակարան և (կամ) ոչ բնակելի տարածք, և որի կառուցման ու սպասարկման համար հատկացված հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը առանձնացված է բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների սեփականատերերի միջև

4. Որում մեկից ավելի սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանում է բնակարան և (կամ) ոչ բնակելի տարածք, և որի կառուցման ու սպասարկման համար հատկացված հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը կարող է առանձնացվել բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների սեփականատերերի միջև

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 222, մաս 3) -2

Հարց 25

Ի՞նչ է ստորաբաժանված շենքը

1. Որում մեկից ավելի սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանում է ոչ բնակելի տարածքը, և շենքի ընդհանուր գույքը չի առանձնացվել ոչ բնակելի տարածքների սեփականատերերի միջև

2. Որում մեկից ավելի սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանում է ոչ բնակելի տարածքը, և որի կառուցման ու սպասարկման համար

հատկացված հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը չի առանձնացվել ոչ բնակելի տարածքների սեփականատերերի միջև

3. Որում մեկից ավելի սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանում է ոչ բնակելի տարածքի կառուցման ու սպասարկման համար հատկացված հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը չի առանձնացվել ոչ բնակելի տարածքների սեփականատերերի միջև

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 222, մաս 3) -2

Հարց 26

Ինչպե՞ս է իրականացվում բնակարանների գործառնական նշանակության փոփոխումը արտադրական, հասարակական կամ այլ գործառնական նշանակության

1. Սեփականատերերի ցանկությամբ
2. Իրավական ակտերով
- 3. Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով**
4. Համայնքի ղեկավարի որոշմամբ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 222, մաս 5) -3

Հարց 27

Ինչպե՞ս կարող է օգտագործվել բնակարանը

- 1. Միայն դրա գործառնական նշանակությանը համապատասխան**
2. Ցանկացած եղանակով
3. Սեփականատիրոջ հայեցողությամբ
4. Կառավարման մարմնի կողմից սահմանված կարգով

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 222, մաս 4) -1

Հարց 28

Բազմաբնակարան շենքի նկուղը համարվո՞ւմ է շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն

- 1. Այո**
2. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 224, մաս 1) -1

Հարց 29

Ինչպե՞ս է որոշվում բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ընդհանուր բաժնային սեփականության հողամասի նկատմամբ յուրաքանչյուր բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի սեփականատիրոջ բաժինը

1. Տվյալ սեփականատիրոջը պատկանող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի մակերեսի հարաբերությամբ տվյալ հարկի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսներին

2. Տվյալ սեփականատիրոջը պատկանող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի մակերեսի հարաբերությամբ այդ շենքի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսներին և արտահայտվում է կոտորակով

3. Տվյալ հարկի բնակարանների կամ ոչ բնակելի տարածքի մակերեսների հարաբերությամբ այդ շենքի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսներին

4. Տվյալ սեփականատիրոջը պատկանող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի մակերեսի հարաբերությամբ տվյալ հարկի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսներին՝ արտահայտված կոտորակով

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 224, մաս 1) -2

Հարց 30

Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում առանձնացված միավորները ո՞ր պահից են դառնում քաղաքացիական շրջանառության օբյեկտ

1. Շենքը շահագործման հանձնելու պահից
2. Շենքը կառուցելու պահից
3. Ավարտված շենքի առանձին միավորների փոխանցման պահից

4. Ավարտված շենքի պետական գրանցման պահից

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 224, մաս 5) - 4

Հարց 31

Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք կամ բնակելի տուն գնելու իրավունքը տարածվում է նաև

1. Սպասարկման հողամասի վրա
2. Ընդհանուր օգտագործման տարածքների վրա
3. Ընդհանուր օգտագործման տարածքների համապատասխան բաժնային մասի վրա
4. **Հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների համապատասխան բաժնային մասի վրա**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 224.1, մաս 3) – 4

Հարց 32

Կառուցված բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք կամ բնակելի տուն սեփականության իրավունքով փոխանցելու ակտում նշվում են

1. Փոխանցման ենթակա անշարժ գույքի մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 566-րդ հոդվածին համապատասխան տվյալներ

2. Փոխանցման ենթակա անշարժ գույքի գնի, կատարված կանխավճարային վճարումների և առկայության դեպքում՝ գնի չվճարված մասի վճարման պայմանների մասին

3. Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույքը կամ բնակելի տունը կառուցապատողի հաշվին շահագործման հանձնելու ժամկետի մասին

4. Նշված բոլոր տարբերակները միասին

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 224.1, մաս 5) – 4

Հարց 33

Կառուցված բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքը, շենքից անշարժ գույքը կամ բնակելի տունը սեփականության իրավունքով փոխանցելու ակտը ենթակա է.

1. Նոտարական վավերացման, դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման

2. Նոտարական վավերացման
3. Պետական գրանցման
4. Համայնքի ղեկավարի կողմից գրանցման

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 224.1, մաս 6) – 1

Հարց 34

Կառուցված բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույքը գնելու իրավունք ունեցող անձին սեփականության իրավունքով փոխանցված է համարվում

1. Հանձնման ընդունման ակտի ստորագրման պահից
2. Շենքի շահագործման ակտը ստորագրելու պահից

3. Սեփականության իրավունքով փոխանցելու ակտի պետական գրանցման պահից

4. Շենքի շինարարական թույլտվությունը տրամադրելու պահից

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 224.1, մաս 6) – 3

Հարց 35

Ե՞րբ է ծագում բնակելի տարածության օգտագործման իրավունքը

1. Օրենքով սահմանված կարգով գույքի օգտագործման պահից
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից

3. Նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագիր կնքումից հետո
4. Օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 225, մաս 2) -2

Հարց 36

Ո՞րն է գրավի ծագման հիմքը

1. Գրավը ծագում է պայմանագրի ուժով, ինչպես նաև օրենքի հիման վրա՝ դրանում նշված հանգամանքների երևան գալով

2. Գրավը ծագում է սեփականատիրոջ կողմից իր գույքը գրավ դնելու մասին դիմումի հիման վրա

3. Գրավը ծագում է օրենքի հիման վրա

4. Գրավը ծագում է սեփականատիրոջ կողմից իր գույքը գրավ դնելու մասին դիմումը բանկ ներկայացնելուց հետո

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 227, մաս 1) -1

Հարց 37

Գույքի գրավատու կարող է լինել միայն գույքի սեփականատերը

1. Ոչ

2. Այո

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 228, մաս 1) -2

Հարց 38

Ո՞ր դեպքում գույքը չի կարող գրավ դրվել մաս առ մաս

1. Այն գույքը, որը չի հանդիսանում արտադրական նշանակության գույք
2. Այն գույքը, որը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն
3. Այն գույքը, որը չի հանդիսանում բնակելի նշանակության գույք
4. **Այն գույքը, որը չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոփոխման**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 230, մաս 2) – 4

Հարց 39

Ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է գրավ դրվել

1. **Միայն բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությամբ**
2. Սեփականատերերից մեկի գրավոր համաձայնությամբ
3. Սեփականատերերից մեկի համաձայնությամբ
4. Բոլոր սեփականատերերի համաձայնությամբ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 231, մաս 1) – 1

Հարց 40

Գրավի պայմանագիրը պետք է կնքվի

1. Բանավոր
2. **Գրավոր**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 234, մաս 1) – 2

Հարց 41

Գրավի պայմանագիրը ենթակա է

1. **Նոտարական վավերացման**
2. Գրավոր համաձայնեցման
3. Կադաստրի կոմիտեի հետ համաձայնեցման
4. Կենտրոնական բանկի հետ համաձայնեցման

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 234, մաս 3) – 1

Հարց 42

Ո՞րն է համարվում հիփոթեք

1. Անշարժ գույքի գրավը և հողամասի կառուցապատման իրավունքը
2. Անշարժ գույքի գրավը, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի և կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք գնելու իրավունքի գրավը
3. **Անշարժ գույքի գրավը, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի և կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք կամ բնակելի տուն գնելու իրավունքի գրավը**

4. Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք կամ բնակելի տուն գնելու իրավունքի գրավը

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 260) – 3

Հարց 43

Հիփոթեքի պայմանագրով գրավի իրավունքը ենթակա՞ է գրանցման

1. Այո

2. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 264, մաս 1) – 1

Հարց 44

Թույլատրվո՞ւմ է արդյոք պետության կամ համայնքների սեփականությանը պատկանող բազմաբնակարան և անհատական բնակելի տների ու բնակարանների հիփոթեք

1. Ոչ

2. Այո

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 269, մաս 1) – 1

Հարց 45

Ե՞րբ է դադարում սեփականության իրավունքը

1. Սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, գույքից հրաժարվելու, և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում

2. **Սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում**

3. Սեփականատիրոջ կողմից իր գույքը նվիրաբերելու, գույքը ոչնչացվելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի դեպքերում

4. Սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 279, մաս 1) – 2

Հարց 46

Սեփականության իրավունքից հրաժարվելը հի՞մք է գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները և պարտականությունները դադարելու համար

1. Ոչ

2. Այո

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 280, մաս 2) – 1

Հարց 47

Գույքի կամ իրավունքի հանդիպական հանձնման կամ հանդիպական պարտավորության առկայության դեպքում պայմանագիրը կարո՞ղ է համարվել նվիրատվության

1. Այո

2. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 594, մաս 1) -2

Հարց 48

Նվիրատուի մահից հետո նվիրառուին գույքի կամ գույքային իրավունքների տեսքով նվերի հանձնում նախատեսող պայմանագիրը

1. Իրավական ուժ ունի

2. Առոչինչ է

3. Անվավեր է

4. Ուժը կորցրած է

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 594, մաս 4) -2

Հարց 49

Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը

1. Կնքվում է գրավոր և ենթակա չէ նոտարական վավերացման

2. Կնքվում է գրավոր և կարող է անցնել նոտարական վավերացում

3. Կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 595) -3

Հարց 50

Անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա՞ է արդյոք պետական գրանցման

1. Այո

2. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 596) -1

Հարց 51

Եթե նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումն արդեն գրանցված է, նվերն ընդունելուց հրաժարվելը ենթակա՞ է արդյոք պետական գրանցման

1. Ոչ

2. Այո

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 597, մաս 2) -2

Հարց 52

Ինչի՞ հիման վրա է վարձատուն պարտավորվում վճարի դիմաց անշարժ գույքի ժամանակավոր տիրապետումը և (կամ) օգտագործումը հանձնել վարձակալին

1. Բանավոր համաձայնության

2. Վարձակալության պայմանագրի

3. Գրավոր համաձայնության

4. Նախնական պայմանավորվածության

Հարց 53

Ու՞մ է պատկանում գույքը վարձակալության հանձնելու իրավունքը

1. Վարձակալին
2. Գույքը տիրապետողին
3. **Գույքի սեփականատիրոջը**
4. Գույքը օգտագործողին

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 609, մաս 1) -3

Հարց 54

Ենթակա՞ է արդյոք նոտարական վավերացման անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը

1. Ոչ
2. **Այո**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 610, մաս 2) -2

Հարց 55

Անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են

1. **Պետական գրանցման**
2. Բանավոր հավաստման
3. Անհապաղ կատարման

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 611) -1

Հարց 56

Եթե վարձակալության ժամկետը պայմանագրում որոշված չէ, ապա վարձակալության պայմանագիրն ի՞նչ ժամկետով է կնքված համարվում

1. 1 տարի ժամկետով
2. **Անորոշ ժամկետով**
3. 6 ամիս ժամկետով
4. Ոչ ավել քան 3 տարի ժամկետով

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 612, մաս 2) -2

Հարց 57

Անշարժ գույքի վարձակալության դեպքում որքա՞ն ժամանակ առաջ պետք է մյուս կողմին տեղեկացնել վարձակալության պայմանագրից հրաժարվելու մասին

1. Ամենքիչը 1 ամիս առաջ
2. 6 ամիս առաջ
3. **3 ամիս առաջ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով**
4. Ցանկացած պահի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 612, մաս 2) - 3

Հարց 58

Պարտավոր է արդյոք վարձատուն վարձակալության պայմանագիրը կնքելիս վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին

1. Ոչ

2. Այո

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 615, մաս 2) – 2

Հարց 59

Ինչպե՞ս է որոշում վարձակալության հանձնված գույքի վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետները

1. Օրենքով սահմանված կարգով

2. Վարձատուի և վարձակալի բանավոր համաձայնությամբ

3. **Վարձակալության պայմանագրով**

4. Սեփականատիրոջ կողմից որոշված կարգով

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 616, մաս 1) – 3

Հարց 60

Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում վարձատուն իրավունք ունի՞ նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը

1. **Այո, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով**

2. Այո

3. Ոչ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 616, մաս 5) – 1

Հարց 61

Վարձակալը պարտավոր է վարձակալված գույքն օգտագործել

1. **Վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան, իսկ եթե այդ պայմանները որոշված չեն, ապա՝ գույքի նշանակությանը համապատասխան**

2. Վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան, իսկ եթե այդ պայմանները որոշված չեն, ապա՝ իր հայեցողությամբ

3. Գույքի նշանակությանը համապատասխան

4. Իր ցանկությամբ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 617, մաս 1) – 1

Հարց 62

Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք է արդյոք վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար

1. **Ոչ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով**

2. Այո

3. Այո, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով

Հարց 63

Ու՞մ է փոխանցվում անշարժ գույք վարձակալած քաղաքացու մահվան դեպքում վարձակալության պայմանագրով նրա իրավունքները և պարտականությունները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով

1. Ոչ ոքի
2. **Ժառանգին**
3. Ընտանիքի անդամներին
4. Երեխաներին

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 619, մաս 2) -2

Հարց 64

Իրավունք ու՞նի վարձակալն վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության, վարձակալության պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի

1. Ոչ
2. **Այո**

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 620, մաս 1) -2

Հարց 65

Ի՞նչ ժամկետով կարող է կնքվել անշարժ գույքի ենթավարձակալության պայմանագիրը

1. 1 տարուց ոչ ավել
2. **Վարձակալության պայմանագրի ժամկետը չգերազանցող**
3. Ցանկացած
4. 6 ամիս

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 620, մաս 2) -2

Հարց 66

Ու՞մ սեփականությունն է համարվում վարձակալած գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով:

1. **Վարձակալի**
2. Սեփականատիրոջ
3. Վարձատուի
4. Վարձակալի և վարձատուի՝ հավասարաչափ

(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք հոդված 626, մաս 1) -1

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N2078-Ն ՈՐՈՇՈՒՄ

Հարց 1

Ի՞նչ եղանակով են կատարվում սեփականատերերի կողմից օրենքով սահմանված վճարները

1. Կանխիկ եղանակով

2. Անկանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր շենքի համար առանձին, այդ նպատակով շենքի կառավարման մարմնի (հաշվետերոջ) անվամբ բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով

3. Կանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր շենքի համար առանձին

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 2) – 2

Հարց 2

Անկանխիկ եղանակով վճարում է համարվում

1. Կանխիկ կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումը, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին

2. Անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումը, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին

3. Անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումը, որն ուղղված է (փոխանցվում է) կառավարչի բանկային հաշվին

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 2) – 1

Հարց 3

Բանկային հաշիվը շենքի կառավարման մարմնի անվամբ և վերջինիս դիմումի հիման վրա կարող է բացվել ՀՀ ռեզիդենտ համարվող ցանկացած բանկում

1. Այո

2. Ոչ

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 3) – 1

Հարց 4

Սեփականատերերի կողմից բանկային հաշվին փոխանցված վճարները շենքի կառավարման մարմնի կողմից կարող են ուղղվել օրենքով սահմանված հարկերի, տուրքերի վճարումների իրականացմանը

1. Այո

2. Ոչ

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 4, ենթակետ 3) – 1

Հարց 5

Շենքի կառավարման մարմնի կողմից բանկային հաշվի վարումը, այդ թվում՝ հաշվից ելքերի, փոխանցումների կատարումը և հաշվով այլ գործառնությունների իրականացումը, իրականացվում են

1. Բացառապես կանխիկ եղանակով

2. Կանխիկ եղանակով

3. Բացառապես անկանխիկ եղանակով

4. Անկանխիկ եղանակով

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 5) – 3

Հարց 6

Արդյո՞ք բացվում է առանձին բանկային հաշիվ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կազմում 1-ից ավելի բազմաբնակարան շենք ընդգրկված լինելու դեպքում յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար

1. Այո

2. Ոչ

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 6) – 1

Հարց 7

Արդյո՞ք բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կազմում 1-ից ավելի բազմաբնակարան շենք ընդգրկված լինելու դեպքում կառավարման մարմնի կողմից բացվում է մեկ ընդհանուր բանկային հաշիվ

1. Այո

2. Ոչ

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 6) – 2

Հարց 8

Կառավարման մարմնի կողմից բանկային հաշիվ բացելու վերաբերյալ դիմումին կից պարտադիր է ներկայացնել

1. Շենքերի նախագիծը

2. **Իր լիազորությունները հաստատող սեփականատերերի ժողովի արձանագրությունը**

3. Սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը

4. Շենքի բնակիչների ցուցակը

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 7) – 2

Հարց 9

Ի՞նչ եղանակով են իրականացվում բազմաբնակարան շենքի, շինությունների սեփականատերերի կողմից կատարվող մուտքերը, ինչպես նաև հաշվից ելքերը բանկային հաշիվը բացելուց հետո

1. Բացառապես կանխիկ եղանակով

2. Կամ կանխիկ, կամ անկանխիկ եղանակով

3. Կանխիկ և անկանխիկ եղանակով

4. **Բացառապես անկանխիկ եղանակով**

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 8) – 4

Հարց 10

Բանկային հաշվի բացումից հետո հաշվետերը սեփականատերերին ե՞րբ է տեղեկացնում հաշվի բացման և օրենքով սահմանված վճարները համապատասխան հաշվին անկանխիկ եղանակով կատարելու մասին

1. Երկու օրվա ըթնացքում

2. Մեկշաբաթյա ժամկետում

3. Երկու աշխատանքային օրվա ընթացքում

4. Մեկ ամսվա ընթացքում

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 9) – 3

Հարց 11

Հաշվետիրոջից բանկային հաշվի բոլոր գործարքների (հաշվում հաշվարկված գումարների, հաշվից ըստ ուղղությունների ծախսված գումարների, գումարների մնացորդի չափի և այլն) վերաբերյալ տեղեկատվություն (քաղվածք) կարող է ստանալ

1. Շենքի յուրաքանչյուր սեփականատեր

2. Շենքի յուրաքանչյուր բնակիչ

3. Յուրաքանչյուր ոք

4. Շենքի 18 տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 11) – 1

Հարց 12

Շենքի յուրաքանչյուր սեփականատեր կարող է հաշվետիրոջից ստանալ տեղեկատվություն, (քաղվածք)

1. Բանկային որոշ գործարքների վերաբերյալ

2. Միայն բանկային հաշվից ըստ ուղղությունների ծախսված գումարների վերաբերյալ

3. Բանկային հաշվի բոլոր գործարքների (հաշվում հաշվարկված գումարների, հաշվից ըստ ուղղությունների ծախսված գումարների, գումարների մնացորդի չափի և այլն) վերաբերյալ

4. Միայն բանկային հաշվի գումարների մնացորդի չափի վերաբերյալ

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 11) – 3

Հարց 13

Քանի՞ օրվա ընթացքում է հաշվի վերաբերյալ տեղեկատվությունը հաշվետիրոջ կողմից սեփականատիրոջը տրամադրվում դիմում ներկայացնելուց հետո

1. Անմիջապես

2. 5 աշխատանքային օրվա

3. 3 աշխատանքային օրվա

4. 5 օրվա

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 12) – 2

Հարց 14

Ի՞նչ եղանակով է հաշվետիրոջ կողմից սեփականատիրոջը տրամադրվում հաշվի վերաբերյալ տեղեկատվությունը

1. Փոստի միջոցով

2. Էլեկտրոնային փոստի միջոցով

3. Առձեռն փոխանցման միջոցով

4. Նշված բոլոր 3 տարբերակներով

Հարց 15

Բանկային հաշվի մուտքերի՞ց են բազմաբնակարան շենքի՝ շինությունների սեփականատերերից պարբերաբար գանձվող՝ շենքի պահպանման պարտադիր նորմերի գծով պարտադիր վճարներից և պարտադիր վճարներից դուրս այլ վճարները

1. Ոչ

2. Այո

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 13, ենթակետ 1) – 2

Հարց 16

Բանկային հաշվում առկա միջոցների մի մասը կարող է տեղաբաշխվել այլ հաշվում որպես

1. Ավանդ

2. Եկամուտ

3. Աշխատավարձի վճարման աղբյուր

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 14) – 1

Հարց 17

Կառավարման մարմնի լիազորությունները դադարելու և նոր կառավարման մարմին ընտրվելուց հետո՝ նոր կառավարման մարմինը հին կառավարման մարմնին քանի՞ օրվա ընթացքում է տրամադրում իր բանկային հաշվի վերաբերյալ տվյալները

1. Մեկ օրվա

2. Երեք օրվա

3. Հինգ աշխատանքային օրվա

4. Մեկ աշխատանքային օրվա

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 15, ենթակետ 1) – 4

Հարց 18

Կառավարման մարմնի լիազորությունները դադարելու և նոր կառավարման մարմին ընտրվելուց հետո՝ նախկին կառավարման մարմինը հաշվի բացման, վարման և փակման հետ կապված բոլոր փաստաթղթերը նոր կառավարման մարմնին է փոխանցում

1. Եռօրյա ժամկետում

2. Երկօրյա ժամկետում

3. Մեկշաբաթյա ժամկետում

4. Տասնօրյա ժամկետում

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 15, ենթակետ 2) – 2

Հարց 19

Ու՞մ պետք է տեղեկացնի նոր կառավարման մարմինն իր անվամբ հաշվի բացումից հետո

1. Համայնքի ղեկավարին

2. Սեփականատերերին

3. Համայնքի ավագանուն

4. Ոչ մեկին

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 17) – 2

Հարց 20

Նոր կառավարման մարմինն իր անվամբ հաշվի բացումից հետո դրա մասին ինչ ժամկետում պետք է սեփականատերերին ներկայացնի տեղեկատվություն

1. Նույն օրվա ընթացքում

2. 10-օրյա ժամկետում

3. 2 աշխատանքային օրվա ընթացքում

4. 10 աշխատանքային օրվա ընթացքում

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 17) – 3

Հարց 21

Ի՞նչ նպատակով է ձևավորվում պահուստային ֆոնդը

1. Կառավարման մարմնի աշխատավարձը վճարելու նպատակով

2. Բազմաբնակարան շենքը պահպանելու և կառավարելու կապակցությամբ առաջացող վնասները և այլ անկանխատեսելի ծախսերը, մասնավորապես, վթարները կանխելու և վերացնելու, անհետաձգելի նորոգումների, տուգանքների, երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունը վաղաժամկետ մարելու, արժեքների և սակագների չպլանավորված բարձրացումը փոխհատուցելու նպատակով

3. Կառավարման մարմնի անվամբ վարկային պարտավորությունները մարելու նպատակով

4. Հարկերի, տուրքերի վճարման նպատակով

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 18) – 2

Հարց 22

Պահուստային ֆոնդը ձևավորվում է՝

1. Գերավճարներից մնացած միջոցներից

2. Սեփականատերերի պարտադիր վճարների տոկոսներից

3. Սեփականատերերի կողմից կատարվող պարտադիր վճարների մասից՝ սեփականատերերի ժողովի որոշմամբ սահմանված չափով (տոկոսային կամ անվանական գումարի տեսքով)

4. Նշված բոլոր աղբյուրներից

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 19, ենթակետ 1) – 4

Հարց 23

Ու՞մ կողմից է սահմանվում ավանդային հաշվին տեղաբաշխված միջոցների չափը

1. Համայնքի ղեկավարի կողմից

2. Սեփականատերերի ժողովի կողմից

3. Նոր կառավարման մարմնի կողմից

4. Սեփականատերերի կողմից

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 21) – 2

Հարց 24

Ո՞վ է վարում ավանդային հաշվին տեղաբաշխված միջոցները և դրա վերաբերյալ տարեկան հաշվետվություն ներկայացնում սեփականատերերին

1. Լիազոր անձը

2. Համայնքի ղեկավարը

3. Համայնքի ավագանին

4. Բազմաբնակարան շենքի կառավարման մարմինը

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 22) – 1

Հարց 25

Արդյո՞ք բանկային հաշվի բացման պայմանագրի լուծումը հիմք է շենքի կառավարման մարմնի անվամբ բացված բանկային հաշիվը փակելու համար

1. Այո

2. Ոչ

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 24) – 1

Հարց 26

Ո՞ր դեպքում է շենքի կառավարման մարմնի կողմից հաշվում առկա մնացորդն օգտագործվում ընդհանուր ժողովի կողմից որոշված ձևով կամ փոխանցվում տվյալ բազմաբնակարան շենքի կառավարման համար բացված այլ բանկային հաշվին

1. Բանկային այլ հաշվի բացման դեպքում

2. Բանկային հաշվի լուծման դեպքում

3. Նոր բանկային հաշվի բացման դեպքում

4. Բանկային հաշվի փակման դեպքում

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 25) – 4

Հարց 27

Բանկային հաշվի սպասարկման համար այլ բանկ ընտրելու մասին որոշման վերաբերյալ բազմաբնակարան շենքի կառավարման մարմինը շենքի, շինությունների սեփականատերերին իրազեկում է որոշումն ընդունելուց հետո՝

1. Երկօրյա ժամկետում

2. Եռօրյա ժամկետում

3. Մեկօրյա ժամկետում

4. Հնգօրյա ժամկետում

(ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2078-Ն որոշում, հավելված, կետ 26) – 2

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 971-Ն ՈՐՈՇՈՒՄ

Հարց 1

Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգ են հանդիսանում ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի հետ կապված

1. Վթարները և պատահարները, որոնք ունեն հրատապ վթարավերականգնողական աշխատանքների կարիք

2. Վթարները և պատահարները, որոնք ունեն աշխատանքների կարիք

3. Վթարները, որոնք ունեն վերացման կարիք

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 2, ենթակետ 1) – 1

Հարց 2

Արդյոք անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման հիմնական պայմաններից է բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի ահազանգի առկայությունը

1. Այո

2. Ոչ

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 3, ենթակետ 1, «ա» պարբերություն) – 1

Հարց 3

Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման հիմնական պայմաններից է

1. Բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից տրված եզրակացությունը՝ վտանգի առկայության մասին

2. Բազմաբնակարան շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացությունը՝ վտանգի առկայության մասին

3. Բնակիչների ահազանգերի արձանագրությունը՝ վտանգի առկայության մասին

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 3, ենթակետ 1, «բ» պարբերություն) – 2

Հարց 4

Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման հիմնական պայմաններից է

1. Սեփականատերերի պարտադիր մասնակցությունը

2. Սեփականատերերի կամավոր մասնակցությունը

3. Բնակիչների պարտադիր մասնակցությունը

4. Բնակիչների կամավոր մասնակցությունը

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 3, ենթակետ 4) – 1

Հարց 5

Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման հիմնական պայմաններից է

1. Համայնքի կողմից նշանակված կառավարման մարմնի առկայությունը

2. Բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի կողմից ընտրված կառավարման մարմնի առկայությունը

3. Բազմաբնակարան շենքի սեփականատերերի ցանկությունը

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 3, ենթակետ 2) – 2

Հարց 6

Արդյո՞ք Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման հիմնական պայմաններից է տվյալ բազմաբնակարան շենքի համար առանձին,

բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ բացված բանկային հաշվի առկայությունը

1. Այո

2. Ոչ

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 3, ենթակետ 3) – 1

Հարց 7

Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման համար շենքի տեխնիկական վիճակի հետազննությունը պատվիրվում է բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից՝

1. Ոչ ուշ, քան նպատակային ծրագրին մասնակցության հայտը ներկայացնելուն նախորդող եռամսյակի ընթացքում

2. Ոչ ուշ, քան նպատակային ծրագրին մասնակցության հայտը ներկայացնելուն նախորդող մեկ տարվա ընթացքում

3. Ոչ ուշ, քան նպատակային ծրագրին մասնակցության հայտը ներկայացնելուն նախորդող մեկ ամսվա ընթացքում

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 4, ենթակետ 1) –2

Հարց 8

Բազմաբնակարան շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացությունը պատվիրելու համար վճարված գումարը դիտարկվում է որպես անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացմանը սեփականատերերի կողմից ապահովվող ֆինանսական մասնակցության մաս

1. Այո

2. Ոչ

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 4, ենթակետ 2) –1

Հարց 9

Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի շրջանակներում առաջնահերթությունը տրվում է այն բազմաբնակարան շենքին, որի

1. Սեփականատերերի մասնակցությունն ամենացածրն է

2. Սեփականատերերի ցանկությունն ամենամեծն է

3. Սեփականատերերի մասնակցությունն ամենաբարձրն է

4. Բնակիչների ակտիվությունն ամենամեծն է

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 4, ենթակետ 3) –3

Հարց 10

Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրի բնույթից և ծավալից ելնելով՝ կարո՞ղ են սահմանվել լրացուցիչ պայմաններ և առանձնահատկություններ

1. Այո

2. Ոչ

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 5) –1

Հարց 11

Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացմանն ուղղված նպատակային ծրագրի բնույթից և ծավալից ելնելով ու՞մ կողմից կարող են սահմանվել լրացուցիչ պայմաններ և առանձնահատկություններ

1. Համայնքի ղեկավարի կողմից

2. Կառավարության կողմից

3. Շենքի կառավարման մարմնի կողմից

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 5) –2

Հարց 12

Անձանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի վերացման աշխատանքները մարզերի բնակավայրերի համար կազմակերպվում և ֆինանսավորվում են

1. Ամբողջությամբ պետական միջոցների հաշվին

2. Մարզպետների աշխատակազմերի միջոցով

3. Ամբողջությամբ համայնքների միջոցների հաշվին

4. ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգով

(ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N971-Ն որոշում, հավելված, կետ 6, ենթակետ 2, «ա» պարբերություն) –4

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N1161-Ն ՈՐՈՇՈՒՄ

Հարց 1

Որո՞նք են բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը

1. Այնպիսի նվազագույն ծավալի պարտադիր իրականացման ենթակա կազմակերպական և տեխնիկական համալիր միջոցառումներ ու աշխատանքներ, որոնց ժամանակին չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին

2. Այնպիսի նվազագույն ծավալի տեխնիկական համալիր միջոցառումներ որոնց ժամանակին չիրականացումը կարող է անմիջական վտանգ ներկայացնել շրջակա միջավայրին

3. Այնպիսի նվազագույն ծավալի պարտադիր իրականացման ենթակա կազմակերպական աշխատանքներ որոնց չիրականացումը կարող է վտանգ ներկայացնել քաղաքին

4. Այնպիսի աշխատանքներ որոնք իրենցից վտանգ են ներկայացնում

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, հավելված 1, կետ 1)-1

Հարց 2

Սպառման թափոնները հեռացվում են

1. Առնվազն երեք օրը մեկ անգամ

2. Առնվազն երեք օրը մեկ անգամ, իսկ +5°C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ամեն օր

3. Ամեն օր

4. Առնվազն հինգ օրը մեկ անգամ, իսկ +5°C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ երկու օրը մեկ անգամ

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, հավելված 1, կետ 2, ենթակետ 1)-2

Հարց 3

Ի՞նչ ժամկետում պետք է իրականացվի ընդհանուր օգտագործման տարածքների, աղբամուղի ու աղբահավաք խցերի դեզինսեկցիայի (պայքար միջատների դեմ) և դեռատիզացիայի (պայքար կրծողների դեմ) աշխատանքները

1. Առնվազը տարին մեկ անգամ

2. Առնվազը ամիսը մեկ անգամ

3. Առնվազն երեք ամիսը մեկ անգամ

4. Հինգ ամիսը մեկ անգամ

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, հավելված 1, կետ 2, ենթակետ 2)-3

Հարց 4

Բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրում պետք է իրականացվի

1. Երեք օրը մեկ անգամ

2. Առնվազն երկու օրը մեկ անգամ

3. Ամեն օր

2. Առնվազն 5 օրը մեկ անգամ

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 1-ին հավելված, կետ 2, ենթակետ 3) -2

Հարց 5

Ծխաօդատար ուղիների մաքրում-կարգաբերում իրականացվում է

1. Առնվազն երկու տարին մեկ անգամ

2. Տարին մեկ անգամ

3. Տարին երկու անգամ

4. Առնվազն տարեկան մեկ անգամ

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 1-ին հավելված, կետ 2, ենթակետ 4) -4

Հարց 6

Ու՞մ կողմից են որոշվում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության վերանորոգման աշխատանքների և կանխարգելիչ միջոցառումների իրականացման ժամկետները

1. Քաղաքապետարանի կողմից
2. Բնակիչների կողմից
3. **Շենքի կառավարման մարմնի կողմից**
4. Շենքի սեփականատերերի կողմից

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 1-ին հավելված, կետ 2, ենթակետ 6) -3

Հարց 7

Կառավարման մարմնի կողմից վերանորոգման աշխատանքների և կանխարգելիչ միջոցառումների իրականացման ժամկետները որոշվում են

1. առնվազն տարեկան 2 անգամ (գարնանը և աշնանը) մասնագիտական կազմակերպության կողմից տրված եզրակացության հիման վրա

2. առնվազն տարեկան 2 անգամ (գարնանը և աշնանը) կատարվող տեսողական զննման, անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական կազմակերպության կողմից տրված եզրակացության հիման վրա

3. ըստ անհրաժեշտության կատարվող տեսողական զննման, անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական կազմակերպության կողմից տրված եզրակացության հիման վրա

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 1-ին հավելված, կետ 2, ենթակետ 6) -2

Հարց 8

Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության վթարային բնույթի այն վնասվածքներն ու անսարքությունները, որոնք կարող են ուղղակի վտանգ ներկայացնել, պետք է վերացվեն

1. Անհապաղ
2. Մեկ օրվա ընթացքում
3. Ոչ ուշ՝ քան մեկ շաբաթվա ընթացքում

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 1-ին հավելված, կետ 2, ենթակետ 7) -1

Հարց 9

Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականությանը սպառնացող ուղղակի վտանգի փաստը պետք է հաստատվի

1. Համայնքի կողմից
2. Տվյալ շենքի կառավարման մարմնի կողմից
3. Տվյալ շենքի բնակիչների կողմից
4. **Տվյալ բնագավառում պետական լիազորված մարմնի կողմից**

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 1-ին հավելված, 2 կետ 2, ենթակետ 7) -4

Հարց 10

Բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունները կատարվում են պարբերաբար

1. Բայց ոչ ուշ, քան 10 տարին մեկ անգամ

2. Բայց ոչ շուտ քան 10 տարին մեկ անգամ

3. Բայց ոչ շուտ քան 5 տարին մեկ անգամ

4. Տարին մեկ անգամ

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 1-ին հավելված, կետ 2, ենթակետ 9) -1

Հարց 11

Նոր կառուցվող, ինչպես նաև մինչև 10 տարի առաջ կառուցված շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունը իրականացվում է

1. 5 տարին լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում

2. 10 տարին լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում

3. 10 տարի հետո

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 1-ին հավելված, կետ 2, ենթակետ 11) -2

Հարց 12

Ո՞րն է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման նորմ

1. Ինքնակամ շինարարության կանխարգելում

2. Ինքնակամ շինարարության խրախուսում

3. Բակային տարածքների մաքրում

4. Բնակիչների հանգստի ապահովում

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 1-ին հավելված, կետ 2, ենթակետ 12) -1

Հարց 13

Որո՞նք են բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները

1. Հիմքերի նստվածքային ճաքերը պետք է լինեն նորմերով թույլատրելի շեղումների շրջանակներում՝ առանց ուղղակի վտանգ սպառնացող վնասվածքների

2. Հիմքերի նստվածքային ճաքերը չպետք է լինեն նորմերով թույլատրելի շեղումների շրջանակներում

3. Հիմքերի նստվածքային ճաքերը պետք է լինեն նորմերով թույլատրելի շեղումների շրջանակներումի

4. Հիմքերի նստվածքային ճաքերը պետք է լինեն առանց ուղղակի վտանգ սպառնացող վնասվածքների

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, հավելված 2, բաժին 1, կետ 1) -1

Հարց 14

Ինչպիսի՞ն պետք է լինեն բազմաբնակարան շենքի հիմքերի նստվածքային ճաքերը

1. Նորմերով թույլատրելի շեղումների շրջանակներում՝ ուղղակի վտանգ սպառնացող վնասվածքների

2. Նորմերով թույլատրելի շեղումների շրջանակներում՝ առանց ուղղակի վտանգ սպառնացող վնասվածքների

3. Շեղումներով, առանց ուղղակի վտանգ սպառնացող վնասվածքների

4. Ուղղակի վտանգ վտանգ սպառնացող վնասվածքներով

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 2-րդ հավելված, բաժին 1, կետ 2) -2

Հարց 15

Արդյո՞ք բազմաբնակարան շենքի սյուները և հեծանները պետք է լինեն առանց այնպիսի ճաքերի և այլ վնասվածքների, որոնք կարող են պատճառ հանդիսանալ ջրի ու մթնոլորտի ազդեցությունից դրանց մետաղական մասերի քայքայմանը

1.Այո

2.Ոչ

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 2-րդ հավելված, բաժին 2, կետ 1) -1

Հարց 16

Որո՞նք են բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույք հանդիսացող՝ միջհարկային ծածկերի պահպանմանը ներկայացվող պահանջները

1. Միջհարկային ծածկերը պետք է լինեն կայուն և առանց ուղղակի վտանգ սպառնացող՝ նորմատիվային թույլատրելի շեղումները գերազանցող ճկվածքների ու տատանումների և պետք է զերծ լինեն խոնավացումից

2. Միջհարկային ծածկերը չպետք է լինեն կայուն և պետք է զերծ լինեն խոնավացումից

3. Միջհարկային ծածկերը պետք է լինեն կայուն և առանց նորմատիվային թույլատրելի շեղումները գերազանցող ճկվածքների ու տատանումների

4. Միջհարկային ծածկերը պետք է լինեն կայուն և առանց ուղղակի վտանգ սպառնացող՝ նորմատիվային թույլատրելի շեղումների

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 2-րդ հավելված, բաժին 4, կետ 1) -1

Հարց 17

Բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված սարքավորումների տեխնիկական վիճակը պետք է լինի առանց մարդկանց կյանքի սպառնալիքի, և դրանց անվտանգ շահագործումը պետք է իրականացվի

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

2. ՀՀ կառավարության որոշումներով

3. Շենքի բնակիչների միջոցներով

4. Շենքի սեփականատերերի կողմից

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 2-րդ հավելված, բաժին 11, կետ 1) -1

Հարց 18

Ինչպե՞ս պետք է իրականացվի շենքում տեղակայված վերելակների, լոկալ ջեռուցման կաթսաների, պոմպերի, օդի լավորակման ու օդափոխության և այլ սարքավորումների անվտանգ շահագործումը

1. ՀՀ սահմանադրությամբ
2. ՀՀ կառավարության որոշումներով

3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

4. ՀՀ կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 2-րդ հավելված, բաժին 11, կետ 1) -3

Հարց 19

Որո՞նք են բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության ապահովմանն ուղղված վերանորոգման աշխատանքների և կանխարգելիչ միջոցառումների իրականացման առավելագույն ժամկետները

1. 10 տարի հետո
2. Առավելագույնը 3 տարվա ընթացքում
3. 5 տարվա ընթացքում

4. Խելամիտ ժամկետում

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 2-րդ հավելված, բաժին 13, կետ 2) -4

Հարց 20

Նկուղներում, տեխնիկական հարկերում և ձեղնահարկերում օդի ջերմաստիճանը պետք է պահպանվի

1. 0°C աստիճանից ոչ պակաս
2. -3°C աստիճանից ոչ պակաս
3. +3°C աստիճանից ոչ պակաս
4. -5°C աստիճանից ոչ պակաս

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 2-րդ հավելված, բաժին 6, կետ 1) -1

Հարց 21

Նկուղներում, տեխնիկական հարկերում և ձեղնահարկերում համեմատական խոնավության մակարդակը պետք է լինի

1. 50 տոկոսից ոչ ավելի
2. 65 տոկոսից ոչ պակաս
3. 65 տոկոսից ոչ ավելի
4. 50 տոկոսից ոչ պակաս

(ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 7-ի N1161-Ն որոշում, 2-րդ հավելված, բաժին 6, կետ 1) -3

Հարց 22

Տանիքաձածկի փայտյա տարրերը պետք է մշակված լինեն

1. Հրակայուն լուծույթով
2. Յուղով
3. Հեղուկ վառելիքով

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 1708-Ն ՈՐՈՇՈՒՄ

Հարց 1

Ի՞նչ է սուբվենցիան

1. Համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ

2. Համայնքի բնակիչների կողմից իրականացվող առանձին ծրագրի կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ

3. Համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար վերադարձման նպատակով տրվող դրամական միջոցներ

(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 1, կետ 3) – 1

Հարց 2

Համայնքի ղեկավարները ու՞մ են ներկայացնում սուբվենցիայի ստացման ծրագրային հայտերը

1. Համապատասխան մարզպետին

2. Համապատասխան ոլորտային պետական կառավարման մարմիններին

3. Երևանի քաղաքապետին

4. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը

(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 1, կետ 4.1) – 1

Հարց 3

Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգման հայտերը սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում դիտարկվում են որպես

1. Առավելություն
2. Առաջնահերթություն

3. Բացառություն

(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 2, կետ 2) – 3

Հարց 4

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում որպես ոլորտ դիտարկվում են

1. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգումը, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառումը

2. Բազմաբնակարան շենքերի էներգախնայող միջոցառումների կիրառումը
3. Բազմաբնակարան շենքերի ներքին հարդարումը
4. Բազմաբնակարան շենքերի վերակառուցումը

(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 2, կետ 24) – 1

Հարց 5

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգման հայտերի շրջանակներում պետության մասնակցության չափը կազմում է

1. 20-60%
2. **35-60%**
3. 40-80%
4. 50%

(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 2, կետ 24) – 2

Հարց 6

Մասնավոր հատվածի (կազմակերպություններ, ընկերություններ, բնակչություն), ինչպես նաև այլ դոնոր կազմակերպությունների կողմից ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի 20 տոկոս և ավելի համաֆինանսավորման դեպքում ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը

1. Նվազում է
2. **Ավելանում է**
3. Բազմապատկվում է
4. Կրկնապատկվում է

(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 2, կետ 24.1) – 2

Հարց 7

Մասնավոր հատվածի (կազմակերպություններ, ընկերություններ, բնակչություն), ինչպես նաև այլ դոնոր կազմակերպությունների կողմից ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի 20 տոկոս և ավելի համաֆինանսավորման դեպքում ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինն ավելանում է

1. և 3 տոկոսով
2. 10 տոկոսով
3. 15 տոկոսով
4. **5 տոկոսով**

(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 2, կետ 24.1) – 4

Հարց 8

«Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում» ծրագրի կիրառման դեպքում՝ բազմաբնակարան շենքերի բնակիչների համաֆինանսավորման մասնակցությունը

1. **Պարտադիր պահանջ է**
2. Պարտադիր պահանջ չէ

(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 2, կետ 24.4) – 1

Հարց 9

«Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում» ծրագրի կիրառման դեպքում բնակիչների համաֆինանսավորման մասնակցությունը կազմում է

1. Ծրագրի ընդհանուր արժեքի 3 տոկոս և ավելիի չափով՝ ամբողջական էներգախնայող միջոցառումների կիրառման դեպքում, և 10 տոկոս և ավել համաֆինանսավորման չափով՝ առանց էներգախնայող միջոցառումների կիրառման դեպքում

2. Ծրագրի ընդհանուր արժեքի մինչև 10 տոկոսի չափով

3. **Ծրագրի ընդհանուր արժեքի 5 տոկոս և ավելիի չափով՝ ամբողջական էներգախնայող միջոցառումների կիրառման դեպքում, և 10 տոկոս և ավել համաֆինանսավորման չափով՝ առանց էներգախնայող միջոցառումների կիրառման դեպքում**

4. Ծրագրի ընդհանուր արժեքի 5 տոկոս և ավելիի չափով՝ ամբողջական էներգախնայող միջոցառումների կիրառման դեպքում, և 15 տոկոս և ավել համաֆինանսավորման չափով՝ առանց էներգախնայող միջոցառումների կիրառման դեպքում

(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 2, կետ 24.4) – 3

Հարց 10

«Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում» ծրագրի ընդհանուր գումարից ՀՀ պետական բյուջեի համապատասխան չափաբաժնով համաֆինանսավորումը կատարվում է

1. **Համապատասխան համայնքի չափաբաժնի ֆինանսավորումից հետո**

2. Համապատասխան համայնքի չափաբաժնի ֆինանսավորումից առաջ
3. Համապատասխան համայնքի չափաբաժնի ֆինանսավորումանը զուգահեռ
(ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 6-ի N1708-Ն որոշում, հավելված 2, կետ 26) – 1

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N274-Ն ՈՐՈՇՈՒՄ

Հարց 1

Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի գնահատումն իրականացվում է

1. Ակնադիտական զննության միջոցով
2. **Տեխնիկական վիճակի հետազննությունների միջոցով**
3. Տեսողական զննության միջոցով

(ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N274-Ն որոշման հավելված, կետ 2)-1

Հարց 2

Ի՞նչ նպատակով են կատարվում Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունները

1. **Հուսալիության գնահատման նպատակով**
2. Վերանորոգման նպատակով
3. Վաճառքի նպատակով

(ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N274-Ն որոշման հավելված, կետ 2)-1

Հարց 3

Ի՞նչ նպատակով են կատարվում Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունները

1. Վաճառելու նպատակով

2. Շենքի անվտանգ շահագործումն ապահովելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար որոշում կայացնելու նպատակով

3. Ներքին հարդարման նպատակով

(ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N274-Ն որոշման հավելված, կետ 2)-2

Հարց 4

